



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՊԱՅՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

ԲԸՑՈՒՄՆ 1870 ԸՄԻՆ

ՆԻՍՏ ՅԻՍՈՒՆՆԻՈՒԹ ԵՒ ԻՆՆԵՐՐՈՐԻ

2—16 ՄԱՐՏ 1873



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԸՍՄԸ ԸԼԹՔ ՃԵՄԸ ԻՆՆ

1873

ՔԱՊԷԱՆՈՒՐ ԱՊՊԱՊ

ԲԱՅՈՒՄ 1870 ՄՄԷՆ

ՆԻՍՑ ԺԸ.

2 ՄԱՐՑ 1873

ՆԱԽԱԳԱՀ. — ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԻ.

ԱՏԵՆԱՊԵՏ. — ՕՏԵԱՆ Գ. ԷՖԷՆՏԻ (Ա. Ատենապետ)

ԿԱՐԳ ԽՆԴՐՈՅ

1. Վաւերացում նախորդ ՄԷ. նիստի ատենագրութեան :
2. Վաւերացում նորընտիր Երեսփոխանաց :
3. Տեղեկագիր քուէհամարի ընտրութեան Սահմանադրութեան վերաբնիչ Յանձնաժողովոյ եւ քուէարկութիւն մնացեալ Անդամոց :
4. Տեղեկագիր Աղթամարայ Կաթուղիկոսական խնդրոյն :
5. Ատենական կանոնադրութիւն :

Ժամը 8 ին քառորդ մնացած էր, երբ ժողովոյն նիստը բացուեցաւ 'ի ներկայութեան 55 Երեսփոխանաց, մեծամասնութեան ժողովոյ, որոց վերջին թիւն 75 ի յանդեցաւ :

ՎԱՐԻՐԱՅՈՒՄ ՆԱԽՈՐԴ ՄԷ. ՆԻՍՑԻ ԱՏԵՆԱՊԵՏՈՒԹԵԱՆ

ՄԷ. նիստի Ատենագրութեան վրայ հետեւեալ զխտողութիւններն եղան :

ԻՓԷԿՃԵԱՆ Հ. ԷՖ. — Նախընթաց ՄԴ. եւ ՄԵ. նիստերու Ատենագրութեանց վրայ գրաւոր զխտողութիւն հաղորդած էի Դիւանին, զոր չեմ տեսներ ներկայացեալ Ատենագրութեան մէջ, մինչդեռ ուրիշներունը արձանագրուած է,

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ստոյգ է. ձեր գրաւոր զխտողութիւնն Ա. Ատենագրակիր ԷՖ. ին քով մնացած է, որ այսօր ներկայ չէ, եւ Ատենագրութիւնը տպագրուած միջոցին իւր հիււանդութեանը պատճառաւ իրմէն չէ կրցեր առնուիլ եւ ատենագրութեան մէջ անցնիլ. այդ պակասը կրնամք լեցընել հետագայ Ատենագրութեան մէջ : Ուրիշ զխտողութիւն մը ունի՞ք :

ԻՓԷԿՃԵԱՆ Հ. ԷՖ. — Ընդհ. ժողովոյ նախորդ որոշման մը համաձայն Ատենագրութեանց վրայ զխտողութիւնք երկուքի բաժնուած են. մասնաւոր եւ ընդհանուր Մասնաւոր զխտողութիւնս ըրի, նոյնպէս ընդհանուր զխտողութիւն ալ ունիմ, եւ կսպասեմ ընդհանուր զխտողութեանց կարգին :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կաղաչեմ ի՞նչ զիտո- ղութիւն որ ունիք ըրէք, ընդհանուր թէ մաս- նաւոր :

ԻՓԷԿՃԵԱՆ Հ. ԷՖ. — Որովհետեւ ուրիշ ոչ ոք մասնաւոր զիտողութիւն ընող չեղաւ, ուստի կուգամ ընդհանուր զիտողութիւնս ը- նելու : Նախ զիտել կուտամ որ : Երեսփոխանի մը կողմէ չարտասանուած խօսք մը սպրդուած է իւր գրաւոր զիտողութեան մէջ, զոր եթէ ստուգիւ ըսած լինէր, անշուշտ պատասխանը պիտի տրուէր, ինչպէս որ այն ատեն շատ մը յարուսն ընդմիջմանց վայելուչ պատասխան- ներ տրուեցան : Եւ երկրորդ՝ 819 Երեսփն Ա. սիւնակին մէջ Ս. Նախագահ Հօր խօսքէն ան- միջապէս ետքը յիշուած չէ սա որոշումը, որ եղաւ Նորին Սրբազնութեան առաջարկութեան համեմատ : Ատենական կանոնագրի ծրագրին քննութիւնը Սահմանագրութեան վերաքննիչ Յանձնաժողովին յանձնելու համար. ամենն ալ կը յիշեն որ ձեռքերնիս վեր առինք եւ առաջ այդ որոշումն ըրինք. անկէ ետքն է երկրորդ որոշումն, որ 820 Երեսփն Ա. սիւնակին մէջ յիշուած է, եւ որով ժողովն իւր առաջին որոշումը ջրեց. այս զիտողութիւնը պարտքս է ընել, թէ եւ շատ գոհ կըլլայի որ այդ թե- րութիւնն եղած չըլլար եւ ինձի առիթ չտար զիտողութիւն ընելու :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Արդէն, Իփէկճեան էֆէնտի անցեալ նիստին մէջն ալ ըրիք այդ զի- տողութիւնը եւ ժողովը համակարծիք չեղաւ ձեզ. հիմա նորէն նոյն կէտին վրայ անգրա- դառնալն աւելորդ է. եթէ իրօք անցեալ ան- գամին սխալ ընթացք մը տեղի ունեցած ըլլայ ժողովին մէջ, դարձեալ զայն քննադատելու իրաւունք չունիք. ատենագրութեան մասին զիտողութիւն մը ունիք նէ զայն ըսէք :

ԻՓԷԿՃԵԱՆ Հ. ԷՖ. — Այս ատենագ- րութիւնը դեռ վաւերացման չենթարկուեցաւ, իմ ըրածս ընդհանուր զիտողութիւն մ'է զոր կանխաւ յայտնեցի թէ պիտի ընեմ. կը ցաւիմ որ խօսքս լաւ չհասկցուիր : Ս. Նախագահ Հօր առաջարկութեան վրայ որոշում մը եղաւ որ իր տեղը չէ նշանակուած, եւ իմաստը պակ- սած է :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Հիմա հասկցայ ի՞նչ ըսել ուղեղնիդ. տեղ մը կայ ուր քուէարկու- թիւն եղած ըլլալը չէ յիշատակուած, մինչ- դեռ ետքի խօսքերէն կըհասկցուի առաջուց քուէարկութիւն եղած ըլլալը : Ատենագրու- թեան ձեռագիրն աչքէ անցուցած ատենս նըշ- մարեցի եւ ամբողջը կարդալէս ետքը վերա- դառնալով պիտի ուղղէի, չը գիտեմ ինչպէս եղաւ որ չըհասայ ընելու : Ինչ որ է, հիմա ե- թէ ուրիշ զիտողութիւն ընող չկայ, ՄԷ. նըս- տի Ատենագրութեան վաւերացումը հարկաւ այդ սրբագրութեամբը հանդերձ քուէի պիտի դնեմ :

Պահ մը լուրսէնէ ետեւ Ատենագրու է- ֆէնտի տեսնելով որ այլ եւս զիտողութիւն ը- նող չկայ, ՄԷ. նստի ատենագրութիւնը քու- էի կը դնէ, եւ մէկ հակառակ քուէի դէմ ընդհանուր հաւանութեամբ կընդունուի :

Աւասիկ Իփէկճեան էֆէնտի գրաւոր զի- տողութիւնը, որ անցեալ ատենագրութեան համար տրուած՝ այս ատենագրութեան մնաց :

Գիտողութիւնք ՄԷ. նստի Ատենագրու- թեան վրայ :

Էջ 770, սիւնակ երկրորդ, տող 22. Կոյս- րութեան բառը Հոյսութեան ըլլալու է :

Նոյն էջ, նոյն սիւնակ. քանի մը նստա- բաններէ « ինչորոյն վրայ պիտի խօսի թէ պատ- մութիւն պիտի կարգայ » չըսին միայն, այլ եւ պահանջեցին որ օտար քաղաքականութեան ա- նունը չտամ. ես ալ պատասխանեցի թէ խօս- քերուս եւ ոչ մէկ նշանախեցէն կը բաժնուիմ : Եթէ իմ պարտքս իբրեւ երեսփոխան՝ գիտցած- ներս անկեղծօրէն եւ համարձակ յայտնել է, ժողովին ալ պարտքն է լսել, ըսի. վասն զի ա- տենաբանական վարպետութեամբ խօսք չառի, այլ կանխաւ յայտնեցի թէ կոնդակին վրայ խօսելէս առաջ ուրիշ տեղեկութիւններ ունիմ տալու : Գիւսնն իր պարտքը կատարեց ինձ ազգարարութիւն ընելով, Երեսփոխան էֆէն- տիներէն ոմանք ալ իրենց պարտքը կատարեցին իս ընդմիջելով, այսինքն՝ հասկացուցին թէ ինձ համամիտ չեն. եթէ ժողովն ալ չուզեր որ շարունակեմ, անմիջապէս կը լռեմ :

Էջ 771, սիւնակ երկրորդ, վերջին պար- բերութիւնը սրբագրելու է այսպէս. « Անոնք

որ իրենց երեսփոխանական կոչման եւ պար- տուց վրայ թերի գաղափար ունին եւ կը կար- ծեն թէ երեսփոխան մը ազատութիւն չունի օտար տէրութեանց քաղաքականութեան վրայ խօսելու ազգային խնդրոց վիճակը բացայայ- տելու համար, շարունակ կընդմիջեն իս. իսկ ես ինչ որ գիտեմ պարտականութիւն կըգամ ազատօրէն ըսելու. բաւական է որ նախատա- կան խօսքեր չգործածեմ, անքաղաքավարու- թիւն չընեմ » :

Էջ 773, սիւնակ առաջին. Ատենագրու էֆէնտիին ըրած ազգարարութեանը տուած պատասխանս սրբագրելու է այսպէս. « Ժողո- վոյս մէջ օտար քաղաքականութեան վրայ ա- ռաջին անգամ ՎԵՆ. Կաթուղիկոսը խօսեցաւ իր կոնդակով, միայն ունեց անուր. Ես իբրեւ երեսփոխան պարտք համարեցի աւելի անկեղծ ըլլալ եւ օտար քաղաքականութեան անունը տալ. եթէ արդեւ ըլլան խօսքիս, ես ալ ՎԵՆ. Կաթուղիկոսի օրինակին կը հետեւիմ. եւ օտար բառը կը գործածեմ » :

Նոյն էջ, երկրորդ սիւնակին վերի երկու տողերուն մէջ տպագրական սխալները ուղղե- լու է այսպէս. « Էջմիածնի ՎԵՆ. Կաթուղիկո- սի Եւրոպայի Տնօրէնական Հայերը Եւրոպայի » :

Էջ 774, սիւնակ առաջին, վեցերորդ տողէն սկսեալ սրբագրուելու է. « Կրօնական Ժողով եւ այլն ուղղէ զուրուհիներ յար- քութեան, եւ այլն » :

Գիտողութիւնք ՄԵ. նստի ատենագրու- թեան վրայ :

Էջ 784, սիւնակ երկրորդ, եօթներորդ տողի վերջակետէն ետք աւելցնելու է. « Կոն- դակին խնդիրը Վարչութեան շանձնել եւ յա- տուկ մասնաժողովի մը յանձնելը ՎԵՆ. Կա- թուղիկոսի ամբաստանութեան իրաւունք տալ է եւ ժողովոյս ալ անպատուութիւն : Այս կէ- տը եւ այլն » :

Էջ 791, սիւնակ առաջին, խօսքս թերի արձանագրուած է. պէտք է ուղղել այսպէս. « Նորս հինգ անգամ խօսք ուղեցի եւ չտուիք, մինչդեռ ուրիշներն առանց զիւանէն խօսք առ- նելու ժողովին բարեկարգութիւնը արձակ հա- մարձակ կը խանդարեն եւ զիւանը չարգելուր. եթէ խօսք առնել կարենալու համար անկար-

գութիւն ընելու է, ուրեմն մենք ալ սխալնք պրոսալ. . . կը բողոքեմ զիւանին այդ ապօ- ըրնի ընթացքին դէմ » :

Հ. Իփէկճեան

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Ես չեմ ընդու- նիր այս ատենագրութիւնը, գրաւոր զիտողու- թիւնս՝ զոր հաղորդած էի զիւանին ՄԷ. նստի ատենագրութեան վրայ, անոր մէջ անցած չըլլալուն համար :

Այս միջոցին Ատենագրու էֆէնտի անձ- նական տկարութեան եւ ձամբորդութեան օ- րինական պատճառներով բացակայ գտնուող մէկ քանի երեսփոխանաց նամակ ղրկելը յիշե- լով անունին կարդալէ ետեւ, կանցնի յա- ջորդ խնդրոյն :

ՎԱՐԵՐՈՍՈՒՄ ՆՈՐԸՆՅՐ ԵՐԵՍՓՈՒՆԵՐՑ

Ատենագրու էֆ. ընտրութեանց Գործա- դիր յանձնաժողովը կողմէն Երեսփոխանական նոր ընտրութեանց վերաբերեալ Տեղեկագիր մը հասած ըլլալը ծանուցանելով, Ժողովին կը ներ- կայացնէ եւ կը կարգայ զայն. որոյ ահաւասիկ պատճէնը :

Ամենապատիւ Սրբազան Հայր

Նախագահ Ազգային Երեսփոխանական Ժողովոյ

Սամաթիոյ Ենի—Մահալլէի թաղին հրա- ժարեալ երեսփոխանի տեղ նորոգ ընտրութիւն կատարուելով, 76 ընտրողներէն 17 ին մաս- նակցութեամբը երեսփոխան վերընտրուած է բացարձակ առաւելութեամբ

Սեպուհ էֆ. Թիւրքիւղեան քուէ 15 :

Բերայի հրաժարեալ երեսփոխան Սըլա- ճեան Սարգիս էֆ. ի տեղ նորոգ ընտրութիւն կատարուելով, 200 ընտրողներէն 30 ին մաս- նակցութեամբը երեսփոխան ընտրուած է

Մարտիրոս էֆ. Տիլէեան :

Կարնոյ հրաժարեալ երեսփոխան Մկրտիչ- եան Գէորգ էֆ. ի տեղ վիճակին Գաւառական

Ընդհանուր ժողովը երեսօխման ընտրած է

Յակոբ էֆ. Մակարեան:

Աղբիւնուպօլսոյ հրատարակ երեսօխման Պէնզեան Յովհաննէս էֆ. ի տեղ վիճակին Գաւառական ընդհանուր ժողովը երեսօխման ընտրած է

Ռուբէն էֆ. Կիւմրուկէրտանեան:

Սոյն ընտրութեանց օրինակութիւնը հաստատելով, պատկառելի ժողովոյդ կը ներկայացնեմք ի վաւերացումն:

2 Մարտ 1873 Ի Կիւմրուկէրտ. Յանձնաժողովոյ

Ի Ղալաթիա Ատենադպիր Ատենապետ

ՆԱՅՆՆԵՐ ԳՐԱՅԻՆՆԵՐ

Տեղեկագիրը քուէի զրկելով, ժողովն

- 1. Օգսէն էֆ. Խօճասարեան քուէ 31
- 2. Տ. Մատթէոս Վ. Իգմիրլեան » 35
- 3. Կարապետ էֆ. Գարակէօզեան » 32
- 4. Քրիստոստուր էֆ. Ղաղարոսեան » 28
- 5. Տ. Յովհաննէս Քահանայ Մկրտան » 38
- 6. Տ. Ղեւոնդ Վ. Փիրղալէմեան » 27

Իսկ մնացեալ վեց անդամոց համար բացարձակ առաւելութիւն չկրնալով գոյանալ, համեմատական ընտրութեան մնացած են առաւելագոյն քուէ ստացողներէն հետեւեալները.

- 1. Թաղէոս էֆ. Պէկեան քուէ 26
- 2. Յարութիւն էֆ. Տատեան » 23
- 3. Մատթէոս էֆ. Այվատեան » 49
- 4. Համբարձում էֆ. Իփէկճեան » 47
- 5. Գրիգոր էֆ. Օտեան » 45
- 6. Յարութիւն էֆ. Մերեէմ-Գուլի » 45
- 7. Տ. Նիկողայոս Եպիսկ. Աղասեան » 48
- 8. Տ. Հմայեակ Վ. Այազմալեան » 44
- 9. Տելեմաք էֆ. Էնքէրճեան » 20
- 10. Սիմոն էֆ. Միքայէլեան » 42
- 11. Բարսեղ էֆ. Տիւրկէրեան » 26
- 12. Գրիգոր էֆ. Պէրպէրեան » 45

Այժմ մնացեալ վեց անդամոց քուէարկութիւնը պիտի կատարուի. երեք անձ ընդհանուր ժողովոյ անդամներէն եւ մէյմէկ անձ ալ Կրօնական ժողովոյ, Ուսումնական եւ Տնտեսական խորհրդոց անդամներէն պիտի ընտ-

ընդհանուր հաւանութեամբ կը վաւերացնէ կատարուած ընտրութիւնները:

ՏԵՂԵԿՆԵՐ ՔՈՒՔՆԱԿԵՐ ԸՆԾՐԱԹԵՆ ՍԱԿՄ. ՎԵՐԱԳՆՆԵՐ ԵՆԶՆԵԹՈՂՈՂՈՅ ԵՒ ՔՈՒՔԱՐԿՈՒԹԻՒՆ ՄՆՈՑԵԱԼ ԱՆՎԱՐՈՑ.

ԱՏԵՆԱՊԵՏ էֆ. — Ժողովը կը յիշէ որ անցեալ նստին Սահմանադրութեան վերաքննիչ Յանձնաժողովոյ ընտրութեան համար քուէարկութիւն կատարուեցաւ, եւ քուէհամարին արդիւնքը նամակաւ բոլոր երեսօխմանաց հաղորդուեցաւ. քննչաց ստորագրութեամբ գիււանին եկած տեղեկագիրն նայելով, արդէն Յանձնաժողովոյ վեց անդամոց համար բացարձակ առաւելութիւն գոյացած եւ հետեւեալներն ընտրուած են:

- Ընդհանուր ժողովէն
- Կրօնական »
- Քաղաքական »
- Գատաստանական խորհրդէն
- Վանօրէից »
- Ընդհանուր ժողովէն
- Կրօնական »
- Ուսումնական խորհրդէն
- Տնտեսական »

րուին. յիշեցնել հարկ չէ որ ներկայացեալ ընտրելեաց ցուցակէն դուրս անուան քուէ չկրնար արուիլ: Մէկ քանի՛ երեսօխմաններ բացակայ գտնուելու հարկագրուած ըլլալով քուէնին նամակաւ զրկած են, որ ընդունելի է:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. էֆ. — Կարծեմ ընդունելի չէ, քանի որ երեսօխմանաց ուղղուած գրերուն մէջ նամակաւ քուէ ուղղուած չէ:

ԱՏԵՆԱՊԵՏ էֆ. — Սահմանադրութիւնը տուած է այդ իրաւունքը, նամակաւ եկած քուէները կը ընդունուին. հարկ չըկար երեսօխմանաց ուղղուած նամակներուն մէջ գրել, իսկ թէ եւ նամակաւ քուէ զրկողները հինգ են սակայն անոնցմէ միայն Տատեան (արութիւն եւ Այվատեան Մատթէոս էֆէնաթիւն օրինաւոր կերպով զրկած են, միւսներուն քուէները բաց զրկուած ըլլալով անընդունելի են եւ իբր չեկած կը համարուին:

Այս միջոցին քուէարկութիւնը կսկսի կատարուիլ, նախորդ նստին գիււանին կողմէ ընտրուած չորս քննիչները նորէն կը հրաւիրուին ընտրական գործողութեանցը հսկելու: Ատենապետ էֆէնաթիւն որոյ անունն ալ ընտրելեաց ցուցակին մէջ կը գտնուէր, կը խնդրէ երեսօխմաններէն որ զինքը չընտրեն, որպէս զի նորէն ընտրութիւն ընելու հարկ չ'ըլլայ, ինք չըկրնալով ընդունիլ առայժմ:

Քուէարկութիւնը լմննալէ ետեւ քուէհամարի գործողութիւնը ժողովէն դուրս կատարուիլը կառավարիչ Ատենապետ էֆէնաթիւն անցեալ անգամին պէս եւ կընդունուի. հետեւապէս քննչաց կը յանձնուի առանձին կատարել քուէհամարը եւ արդիւնքը բերել ժողովին:

ՏԵՂԵԿՆԵՐ ԱՂՔԱՄԱՐԵՑ ԿԵՐԿՈՒԿՈՍԵԱՆ ԽՆԳՐՈՅ.

ԱՏԵՆԱՊԵՏ էֆ. — Ժողովն արդէն գիւտէ որ այսօրուան նիստին ներկայանալի բուն խնդիրն Աղթամարայ կաթնուղիկոսին խնդիրն է, որոյ համար նաեւ դռնօխակ ընել որոշուած է այս նիստը. խնդիրը ծանր է իր ամեն պարագաներով եւ լուրջ խորհրդածութեան կարօտ, առաւել քան երբէք պէտք ունինք կանոնաւոր վիճարանութեան. կը հրաւիրեմ խօսք ուղղողները որ անունին նշանակել տան գիււանին մէջ, որպէս զի կարգաւ վիճարանին:

Խօճասարեան Օգսէն էֆ. չհաւանիր կանխաւ իւր անունն արձանագրել սալ ի հարկին խօսելու իրաւունքն իրեն վերապահելու կամք յայտնելով, եւ Ատենապետ էֆէնաթիւն պա-

տասխան կընդունի թէ խօսողաց կարգին մէջ ինք արդէն երրորդ նշանակուած է. անկէ ետք եթէ նորէն խօսիլ ուղչէ, ոչ ոք կը բառնայ իրմէ խօսելու իրաւունքը:

Խօճասարեան էֆ. կը յարէ. « Մինչև հիմա Յ7 նստերու մէջ ինչպէս գացինք, այս անգամ ալ այնպէս պէտք է երթամք »:

Պէկեան Ք. էֆ. — Տէւէլէթը Ալթամարայ էլ ինչպէս էլ ինչպէս էլ անունով տպագրեալ տետր մը Աղթամարայ վարչութեան կողմանէ հասաւ երեսօխմանաց ձեռքը, եւ օրուան խնդրոց առաջինն ալ այդ է: Այս մասին իմ կարծիքս յայտնելէ առաջ, հարկ կըզամ Աղթամարայ գործադիր իշխանութեան հարցում մ'ուղղել, որուն պատասխանն ստանալէս անմիջապէս ետեւ պիտի սկսիմ խօսիլ տեղեկագրին վրայ. այս պատասխանն անհրաժեշտ է, զի այդ տեղեկագիրը բերուելուն պատճառը պիտի լուսաբանէ: Աղթամարայ խնդրոյն տեղեկագիրն ընդհանուր ժողովոյն ներկայացնող Աղթամարայ վարչութեան խառն ժողովոյն նամակին մէջ սա տողերը կը կարդամք. « Թէեւ Պատկառելի ժողովը 1870 Յունւար 23ի նստին մէջ Աղթամարայ խնդիրը Եկեղեցական Համագումար ժողովոյն անօրէնութեանը յանձնել ու ըրոշած էր, բայց այդ որոշումը մինչև ցարդ « անգործադրելի մնացած ըլլալով, Աղթամարայ վարչութեան խառն ժողովն հարկ համարեց « կամքն ու վերջնական որոշումն ստանալ »:

Այս տողերէն կը հասկցուի թէ ընդհանուր ժողովն արդէն այս մասին իւր որոշումը տուած է եղեր:

Արդ՝ կը հարցնեմ Աղթամարայ գործադիր իշխանութեան, թէ ինչո՞ւ համար ընդհանուր ժողովոյ յիշեալ որոշումը մինչև ցարդ անգործադրելի մնացած է, եւ թէ մինչև ցարդ անգործադրելի մնալէն, եթէ առանց բանաւոր պատճառի չէ, ի՞նչ հարկ կընին ընդհանուր ժողովոյն կամքն ու վերջնական որոշումն ըստանալու համար խնդիրը վերստին ընդհանուր ժողովոյ առեանը բերելու. միթէ Աղթամարայ վարչութեան նախորդ Քաղաքական ժողովոյն ընդհանուր ժողովոյ մէկ նստին մէջ Աղթամարայ խնդիրը տեղեկագրով մը ներկայացնելու խօսք մ'ընեմ իրաւունք կուտայ ներկայ

տեղեկագիրը բերելու: Եւ այս տեղեկագրով ինչ կը պահանջէ մեզնէ գործադիր իշխանութիւնը՝ չեմք զիտեր, թող բացորոշ կերպիւ յայտնէ, որպէս զի ըստ այնմ վիճարանիմք: Ուրեմն, Ատենապետ էֆ. այս հարցումս եթէ օրինաւոր կը դատէք, կազակներ կրկնեցէք: Թող պատասխանէ Գործադիր իշխանութիւնը, թէ ինչու չէ գործադիր Ընդհանուր ժողովոյ որոշումը եւ այս տեղեկագրով ինչ կը պահանջէ մենք:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Պէկեան էֆ. ի հարցումս օրինաւոր է եւ զիւանն ալ հարկ կը տեսնէ որ Գործադիր իշխանութիւնն որ հոս ներկայ է կամ իր երեսփոխաններն ունի, պատասխանէ:

S. ՄԱՏԹԷՈՍ Վ. ԻԶՄԻՐԻՆԱՆ. — (Յանուն Ազգ. Վարչութեան). Այս տեղեկագրին մէջ խնդիրն իւր ամեն պարագաներովը քըննուած եւ իւր վերջաբանովն Ընդհանուր ժողովոյ կամարը յանձնուած է պէտք եղած որոշումը տալու. նախորդ Ազգ. Վարչութիւնը տեղեկագիր մը բերել խոստացած էր եւ չէր կըրցած բերել. մեք այդ տեղեկագրին աւատիկ բերինք:

ՊԵՎԵԱՆ Թ. ԷՖ. — Այդ պատասխանը զիս գո՛չ չընէր. ըսի թէ կարծիքս յայտնելէ առաջ այդ տեղեկագիրը բերուելու բուն պատճառներուն վրայ պէտք է լուսաբանուիմ: Ազգ. Վարչութեան նամակը կըսէ թէ խոստացուած տեղեկագիրը բերինք. բայց երեք տարի առաջ Ընդհանուր ժողովը խնդիրն եկեղեցական Համագումար ժողովին դարձնելու որոշում մ'ըրեր է. ինչո՞ւ չէ գործադրուէր, կամ գոնէ գործադրութեան մէջ դժուարութիւն մը տեսնելէ ետեւ պէտք չէ՞ր բերուիլ. ուստի նորէն կը հարցնեմ. ինչ օրինաւոր պատճառներ հարկադրեցին խնդիրը Համագումար ժողովին չը տանելու եւ հոս բերելու: Ես կը կարծեմ թէ այս հարցմանս Սրբազան Նախագահը պէտք է պատասխանէ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ըսի արդէն թէ Գիււանը կըստանան Պէկեան էֆ. ի հարցումը. Գործադիր իշխանութիւնը տեղեկագիր մը բերած է, այս տեղեկագրին մէջ հետեւութիւն

մը որոշում մը չը տեսնուիր. միայն Ընդհանուր ժողովոյ կամարը կը փնտռուի. բայց Ընդհանուր ժողովն իւր կամարը շատոնց յայտներ եւ Համագումար ժողովոյ վերաբնութեան յանձններ է խնդիրը. գործադիր իշխանութիւնն իւր այս տեղեկագրին մէջ պէտք էր բացատրէր Ընդհանուր ժողովոյ յիշեալ որոշման անգործադրելի մնալուն պատճառները, բացատրէր միանգամայն թէ այդ պատճառները կրնա՞ն մի բարձուիլ եւ ինչպէս. տեղեկագիրն այս կէտերուն վրայ լուծիւն կը պահէ. ուստի գործադիր իշխանութիւնը պէտք է որ լուսաբանէ զանոնք:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. (Ատենադպիր Գաղաքական ժողովոյ) — Ընդհանուր ժողովոյ 1870 ի բացման Ա. նստին Վարչութիւնը Սոյ եւ Աղթամարայ խնդիրները մէկտեղ ներկայացուցած է արդէն. 1870 յունվար 23 ի որոշումն ետքն է որ նախորդ Վարչութեան ատենադպիր Եուսուֆեան էֆ. խոստացեր է Աղթամարայ խնդրոյն տեղեկագիրն ալ բերել, եւ հարկ էր որ Սոյ խնդիրը վերջանալէ ետեւ Աղթամարինն ալ դար, քանի որ Ընդհանուր ժողովոյ խնդրոց կարգն անցած էր: Իսկ ներկայ Վարչութեան միտքն ալ թէ որ ժողովը կուզէ իմանալ այս է. թէ որ Ընդհանուր ժողովն ըսէ թէ իւր նախորդ որոշման համաձայն այս խնդիրը պէտք է վերաքննուի, Վարչութիւնը պիտի գործադրէ զայն. իսկ թէ որ ըսէ թէ այս ալ լինցած գործ մ'է եւ պէտք է նոր կաթուղիկոս մը ընտրուի, Վարչութիւնն ալ ըստ այնմ պիտի վարուի: Մէկ խօսքով կամ քննութեան եւ կամ անմիջապէս նոր ընտրութեան հրահանգ կսպասէ Վարչութիւնն Ընդհանուր ժողովէդ:

ՊԵՎԵԱՆ Թ. ԷՖ. — Սոյոց է որ տեղեկագիր բերելու խօսք մը անցած է Ընդհանուր ժողովոյ մէկ նստին մէջ, բայց ուղող չէ եղած. միայն ուրիշ խնդրոց մը առթիւ նախորդ Վարչութեան Ատենադպիրն ըսած է այդ խօսքը, եւ ինչ տեսակ տեղեկագիր էր խոստացածը, այն ալ յայտնի չէ:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. (Ատենադպիր Գաղ. ժողովոյ) — Ահաւասիկ Թ. նստի Ատենադրութեան 128 երեսին մէջ Եուսուֆեան էֆ. ի այն խօսքը՝ որ իմ ըսածիս կը վերաբերի. (եւ կը կար-

դայ հետեւեալը). « իրաւ է որ ինչպէս Օգսէն « Էֆէնտին ըսաւ, Վարչութիւնը Աղթամարայ « կաթուղիկոսութեան խնդրոյն վրայ Ընդհանուր ժողովոյն տեղեկագիր մը բերել խոստացած եւ արդէն զայն պատրաստելու ձեռնարկած էր. սակայն տեսնելով որ Խաչատուր եւ « պիսկոպոսն առ Ընդհանուր ժողովն բողոք կը բառնայ, ընդհանուր իր սկսած տեղեկագիրը, « որպէս զի ժողովէն նոր հրահանգ մը առնու « այս մասին եւ ըստ այնմ շարժի »:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այդ հատուածէն յայտնի կերեւայ որ Ընդհանուր ժողովոյ կողմէն հրահանգ կամ որոշում մը չէ արուած նախորդ Վարչութեան Աղթամարայ խնդրոյն վրայ տեղեկագիր բերելու, այլ Խօժասարեան եւ Եուսուֆեան Էֆէնտիններուն մէջ տեղ վիճաբանութեան մը առթիւ այդպիսի խօսք մը եւ պատասխան մը տեղի ունեցեր են:

ՊԵՎԵԱՆ Թ. ԷՖ. — Որոշում չէ, խօսք մ'է եղած, որուն կարեւորութիւն մ'անգամ չ'արուիր. մեք երեսփոխանքս չուզեցինք նախորդ Վարչութեանն այնպիսի տեղեկագիր մը դոր Եուսուֆեան էֆ. բերել կը խոստանայ, եւ ահա ասոր համար էր որ պահ մ'առաջ ըրած հարցմանցս էն վերջը սա հարցումս ալ ըրի, « թէ Ազգ. Վարչութեան նախորդ Գաղաքական ժողովոյն Ընդհանուր ժողովոյն մէկ նստին մէջ Աղթամարայ խնդիրը տեղեկագրով մը ներկայացնելու խօսք մ'ընելը միթէ իրաւունք կուտայ ներկայ Վարչութեան սոյն տեղեկագիրը բերելու:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ո՞ր նստի Ատենադրութեան մէջն է այդ խօսակցութիւնը:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — (պատասխանելով) Ընդհանուր ժողովոյ բացման Ա. նստին սկսեալ Աղթամարայ խնդիրն ալ Սոյ խնդրոյն հետ խնդրոց կարգն էր, եւ չ'զիտենք թէ նախորդ Վարչութիւնն ինչ պատճառաւ այսպէս ըրած էր. թէ պէտ տպագրութեան մէջ Ա. եւ Բ. նստերուն խնդրոց կարգը նշանակեալ չ'է. բայց Գ. Գ. եւ Ե. նստերուն խնդրոց կարգին մէջ նշանակուած է շարժումը Սոյ Եւ Ա. Բ. մարայ կ'ընէինք: Եւ ինչ անուամբ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Բայց այդ որոշում

չէ՛ ըսինք արդէն, պէտք է ցոյց տալ ե՞րբ ժողովը տեղեկագիր բերել տալ որոշեր է:

ԻՓԷԿՃԵԱՆ Հ. ԷՖ. — Կարծեմ Խաչատուր եպիսկոպոս բողոքած է Ընդհանուր ժողովոյ Համագումար ժողովոյ վճռոյն դէմ. ահա՛ ինչ կերպով խնդիրն Ընդհանուր ժողովոյ եկած ըլլալը կը յայտնուի:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Բայց ժողովն այդ բողոքը նկատողութեան առեր եւ ուզե՞ր է մի Վարչութեանն այդ տեղեկագիրը. միւս կողմէ նախորդ որոշում մը կայ եղած, այն ինչն է գործադրուէր. ասոնք հասկըցուելու կարօտ են:

ԻՓԷԿՃԵԱՆ Հ. ԷՖ. — (Տեղեկագրին ըսկիզբը դրուած խօսքերը կարդալով). Հարկաւ այս խօսքերն առանց մտածութեան գրուած չեն. խնդիրը նկատողութեան առնելով կըսէ յանձնաժողով կաղմուեցաւ. այս խօսքէն ինչ կը հասկցուի. անշուշտ ով որ տեղեկագիրը բերած է, այն կրնայ բացատրել:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Տեղեկագրին ով որ է հարկաւ այն գիտէ իր պատճառները, ու՞ր, ե՞րբ ժողովն ուղեր է այսպիսի տեղեկագիր մը: Փախաղեան էֆ. նախորդ Գաղաքական ժողովոյ Ատենադպիր էֆ. ի կողմէ Օգսէն էֆ. ի տրուած մէկ պատասխանը մէջ կը բերէ, բայց անկէ հետեւի թէ ժողովը տեղեկագիր ուղած ըլլայ. թէ որ նախորդ Գաղաքական ժողովը բերած ըլլար այս տեղեկագիրը, պատճառն ահոր պիտի հարցնէինք. բայց այն չէ բերած, այլ անոր յաջորդը, ուստի ներկայ Գաղաքական ժողովին կը հարցնենք. միեւնոյն բանն է:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — (Ատենադպիր Գաղաքական ժողովոյ) Ատենապետ էֆ. ձեր ուղած բացատրութիւնը պիտի տամ, բայց կանխաւ մեր ատենագրութեանց վրայ ակնարկ մը նետենք. շատ անգամ եղած է որ առանց քուէարկութեան որոշումներ Ատենապետի բերով ընդունուած ըլլալը յայտնուած է, թէ եւ Աղաքէկեան, եւ Բուսինեան Էֆէնտիններու Ատենապետութեան ժամանակ պատահած է որ երեսփոխանք + Էֆէնտին պօռացած են, բայց զիւանը ժողովին լուծեամբ ընդունած ըլլալը բաւական սեպած է: Այսպէս ըլլալն ըն-

զուտելէ ետեւ, հիմայ կարգամ Ատենադրու-
թեան մէջ այն մասը, որ Ազգամարայ խընդ-
րոյն վրայ տեղեկագիր մը բերելու հարկն ե-
րեւան հանած է: — Թ. նստին մէջ ժողովըրդ-
եան կողմէ ներկայացեալ հանրագիր մը հարու-
տահարութեանց խնդրոյն վրայ եւ Ազգամար-
ցուց կողմէն հանրագիր մ'ալ իրենց Աթոզի-
կոսական խնդրոյն վրայ կայ: Ատենապետը ա-
սոնք կարգալէ ետքը սպայէս կրսէ:

«Սրբազան Նախագահը յայտնեց որ այս
«հանրագիրը յանուն Ընդհանուր ժողովոյ տրուած
«ըլլալուն՝ պարտք համարել է ուղղակի ընդ-
«հանուրին բերել, առանց ուրիշ խորհուրդ-
«ներէ առաջուց անցնելու. երեսփոխանաց
«մեծ մասը համաձայն է որ ասոնց մէջ Վարչու-
«թեան զրկուելիք խնդիր կայ, որ է Խաչա-
«տուր եպիսկոպոսի խնդիրը, իբր մասնաւոր
«տեղեկագրի կարօս. կը մնայ միայն հարստա-
«հարութեանց վերաբերեալ հանրագիրը»:

Արդ՝ ինչպէս կը յիշեն երեսփոխան է-
ֆէնտինները, ժողովը հարստահարութեանց խնդի-
րը չ'յանձնեց Վարչութեան եւ իր մէջէն Յանձ-
նաժողով մը դրաւ որ տեղեկագիր մը բերէ
եւ այսպէս ալ եղաւ. մնաց Ազգամարայ խըն-
դիրը, որուն տեղեկագիրն ըստ յայտարարու-
թեան զիւանին՝ Վարչութեան բերել կը մնար
Ասոր հետեւանքն է որ Եուսուֆեան է ֆ. քանի-
ցըս կրկնած է տեղեկագիր բերելու խոստումը:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Լաւ է. ինչ որ կը
պատմէր կանոնաւորապէս կատարվեր է. Ազ-
գամարացուց կողմէն Ընդհանուր ժողովոյ
հանրագիր մը մատուցուել է, եւ Ատենապետն
ազէկ ըսեր է թէ գործագիր իշխանութեան
տեղեկագրովը պէտք է ժողովն գայ. սակայն
այս տեղեկագիրը նոյն հանրագրին վրայ հիմ-
նուած չէ, անոր խօսքը բնաւ չկայ:

Տ. ՅՈՎՂ. Ք. Մ'ՈՐԵԱՆ. — Ինչպէս որ
կերեւնայ սոյն տեղեկագրին մէջ, 1870 օգոս-
տոս 28 եւ սեպտեմբեր 11 թուականներով
Խաչատուր կ'ընդհանրէ Տ. Ն. Ազգամարայ ստորագ-
րութեամբ երկու անգամ խնդրագիր մատուց-
ուել է Ընդհանուր ժողովոյ, եւ կարգացուել է
ետեւ Վարչութեան յանձնուելն եւ տեղեկագ-
րով մը բերուելն որոշուել է: Եւ թէ ինչպէս,
ահաւաստիկ. (կը կարգայ Թ. նստի Ատենագ-

րութեան 127 երեսին Թ. սիւնակին հետեւեալ
հատուածը):

«Ընթերցումէն ետքը (խնդրագրոց) Ա-
«տենապետ է ֆ. զիտել տուաւ որ երեսփո-
«խանական ժողովը ներկայացեալ այս երկու
«խնդրոց վրայ ճշգրիտ եւ լիութի տեղեկութիւն
«ստանալու համար, պէտք ունի որ սոյն զը-
«րերը վերադարձնէ Վարչութեան, եւ անկէ
«զայիք տեղեկագրին սպասէ, որպէս զի զի-
«տակցութեամբ որոշէ այս երկու խնդրոց մա-
«սին իւր բունելու ընթացքը»:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կաղաչեմ, այս մաս-
նաւոր պարագային վրայ ինչ որ խօսուեցաւ
բաւական կրնանք համարիլ եւ պէտք է բուն
խնդրոյն վիճարանութեանն սկսիլ. զիւանն ե-
թէ թոյլ տաք՝ այս պարագայն պիտի գոցէ,
Հասկցայ որ Ընդհանուր ժողովին տեղեկագիր
մը պիտի գայ եղեր. բայց այս տեղեկագիրն ա-
նոր ուղած կերպովը չէ. ասոր մէջ պէտք էր
բացատրուած ըլլային Ընդհանուր ժողովոյ նա-
խորդ որոշման անգործադրելի մնալուն պատ-
ճառները. ինչ որ չկայ այս տեղեկագրին մէջ,
գործագիր իշխանութիւնը կրնայ բերանացի
յայտնել. այսպիսով այս միջանկեալ խնդիրը
կը լինայ:

ՊԷԿԵԱՆ Թ. ԷՖ. — Նախ փախզեան
է ֆ. եւ ապա Տ. Մկրեան Հայր գործագիր իշ-
խանութեան կողմէ յիշեցուցին Ազգամարացուց
եւ Խաչատուր եպիսկոպոսի բողոքները. բայց
արդէն իսկ 1870 յունվար 23 ին Սրբազան Պատ-
րիարք Հայրը յատենի Ընդհանուր ժողովոյ այդ
բողոքներուն վրայօք խօսեր է, ինչպէս որ
սոյն տեղեկագրին մէջ կը տեսնածք. ահաւա-
սիկ. (կը կարգայ տեղեկագրին 21 երեսին մէ-
ջէն հետեւեալը):

«Այս օրերս ստիպողական գրեր եկած են
«վիճակայնոց կողմէն Խաչատուր եպիսկոպոսին
«համար, եւ անհամբեր պատասխանի կըսպա-
«սեն, թէ այս խնդիրը կնճռալից կերպարանք
«մը ստացած է, մէկ կողմէն եկեղեցական
«Համագումար ժողովին վճիռը կայ, զոր երես-
«փոխանական Ընդհանուր ժողովն ալ հաստա-
«տեր եւ վաւերացուցեր է, միւս կողմէն Խա-
«չատուր եպիսկոպոսն որ նոյն վճռոյն ենթա-
«կայ կը գտնուի, եւ որ երկար ատենէ ՚ի վեր
«Պօլիս եկած է, կը գանդատի թէ՛ Տիեզերա-

«կան երկոց Ս. Ժողովոց հակառակ առանց իր
«ներկայութեան տրուած է այն վճիռը. եւ
«որովհետեւ ինք ներկայ է այժմ, կը խնդրէ
«որ նորէն դատուի Մասնաժողովոյ մը առջեւ
«եւ իր փաստերն ալ քննուին»: Եւ Ընդհա-
նուր ժողովն վճռուել է որ Համագումար ժո-
ղովին վերադառնայ այս խնդիրը: Այն օրէն ՚ի
վեր 3 տարի անցեր եւ տակաւին անգործագ-
րելի մնալով առանց պատճառն իսկ իմացնելու
այժմ նորէն խնդիրը հոս կուգայ. ուստի պարտք
կղգամ վերստին հարցնել թէ ի՞նչ արգելքներ
առիթ տուած են խնդիրը հոս բերելու. առանց
այս հարցման որոշ պատասխանն ստանալու
իմ կարծիքս չպիտի կրնամ յայտնել:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Հարկաւ գործագիր
իշխանութիւնը միշտ պատրաստ պիտի ըլլայ
բացատրութիւն տալու:

ՓԱՓՍՁԵԱՆ Ս. ԷՖ. — (Ատենագիր Գաղ-
ժողովոյ) 2 1/2 տարուան պատասխանատու-
թիւն չեմ կրնար վրաս առնուլ, 7 ամսուան
միայն պատասխանատուութիւն ունինք մեր
օրուանը. կը հարցուի թէ ինչո՞ւ Համագու-
մար ժողովին վերաքննութեան չը յանձնեցինք
խնդիրը. անոր համար չ'կրցինք յանձնել, վա-
թըն զի չ'զիտացանք մեր նախորդին չ'յանձնե-
լուն պատճառները: Այս մասին Սրբազան Պատ-
րիարքը կրնայ պատասխանել:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Սրբազան Պատ-
րիարքը՝ որ թէ՛ նախորդ եւ թէ՛ արդի Վար-
չութեան Նախագահն է, կրնայ պատասխա-
նել լուսարանելու համար, մանաւանդ որ հայ-
րենեօք ալ մերձաւոր է Ազգամարայ, եւ հոն
պատահած դէպքերուն ՚ի մօտոյ ծանօթ է:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Սրբազան Նախագահն
երբ եւ ուղէ կրնայ խօսիլ, Հարցման նիւթն
այս է թէ ինչո՞ւ Ընդհանուր ժողովոյ նախորդ
որոշումն 3 տարիէ ՚ի վեր անգործադրելի մը-
նացած է: Սրբազան Հայր, արդի Վարչու-
թիւնն ինչպէս անոր պնդումներէն մէկն ըսաւ,
նոր է, չգիտէ եղեր. կրնա՞ք արդեօք յայտ-
նել ՚ի՞նչ պատճառներով այն որոշումը չէ գոր-
ծադրուել:

ԹՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Եթէ Սրբազան
Պատրիարքը խօսեցնել տանք այս պարագային
մէջ, վտանգ կայ. ինքը նախագահն է այսօր

ժողովոյ, միանգամայն համարատու՝ իրրեւ
գործադիր իշխանութեան գլուխ. թերեւս նա-
խորդ Վարչութիւնը մի՞ գործադրեր ըսած եւ
ինքն ալ չգործադրած ըլլայ. թէ՛ այո՛ ըսէ եւ
թէ՛ ո՛չ, Պատրիարքական աթոռն ամբաստա-
նութեան տակ կիցնայ. ուստի նորին Սրբազ-
նութեան չպատկանիր խօսիլ, այլ նախորդ
Վարչութեան անգամք պէտք է խօսին:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Սրբազան Նախագահը
թէ որ ինք ըսելու բան մի ունի կրնայ ըսել.
թէ որ նախորդ Վարչութեան Ատենագիրին
կուղէ թողուլ պատասխանը, զայն պէտք է ը-
սէ. նորին Սրբազնութիւնն իւր խօսքին տէրն
է եւ իրեն միայն կը վերաբերի իր տալիք պա-
տասխանը:

ԹՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Պէտք է գիտ-
նամք թէ իբրեւ ինչ խօսեցնել կուզեմք. նախ
խօսելու գիրքն որոշելու է:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Դիրք որոշելու խըն-
դիրը չ'եմ հասկնար. Սրբազան Պատրիարքն
Ազգային Վարչութեան կողմէ բացատրութիւն
եւ պատասխան մը պիտի տայ. իր կամքէն
կախեալ է, ուղէնէ կը պատասխանէ, չուղէնէ
չեմ կրնար կըսէ. ՚ի՞նչ զարմանալի բան է որ
ուրիշներ իր վրայ հեղինակութիւն բանեցնե-
լու ելլեն:

ՊԷԿԵԱՆ Թ. ԷՖ. — Չեմ ընդունիր թէ
Սրբազան Նախագահը չկարենայ պատասխա-
նել քանի որ Նախագահն է միանգամայն գոր-
ծադիր իշխանութեան. մենք այնպէս զիտեմք
որ իրրեւ գլուխ գործադիր իշխանութեան պէտք
է իրեն ուղղեալ հարցման պատասխանէ. եւ
եթէ պատասխանատուութեան տակ մնալու
բան մը կայ, այն ատեն Ընդհանուր ժողովը
զիտէ ՚ի՞նչ որ պէտք է ընել:

ԹՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Դարձեալ կը-
սեմ թէ ՚ի՞նչ գիրքով պիտի խօսի, որոշեցէք
նախ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Սրբազան Պատրիարքն
ասկէ առաջ ալ շատ անգամ պատասխանած է
Վարչութեան կողմէն: Սրբազան Հայր, կու-
ղէք պատասխանել, այո՛ կամ ո՛չ:

Տ. ՅՈՎՂ. ՀԱՆՆԷՍ Ք. ՄԿՐԵԱՆ. — Ի՞նչ մա-
սին պատասխան կուզուի. 1870 ին օգոստոս

Եւ Սեպտեմբեր ամսոց մէջ նորէն Ընդհանուր ժողովոյ ատեանն եկած է այս խնդիրը, եւ ուրիշ կերպարանք առած:

ՊԷԿԵԱՆ Թ. ԷՖ. — Յանուն որո՞յ կը պատասխանէ Տ. Մկրեան Հայրը:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Իբրեւ Ս. Պատրիարքին փոխանորդը կը խօսիք հոս, Տ. Հայր:

Տ. ՅՈՎՀ. ՔԷՆՅ. ՄԿՐԵԱՆ — Ո՛չ, իմ անձնական կարծիքս կը յայտնեմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Բայց թող չէք տար որ Ս. Պատրիարքը մեր հարցմանը պատասխանէ:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Միայն լուսարանելու համար Ս. Նախագահը կրնայ խօսիլ, առանց իւր վրայ պատասխանատուութիւն մ'առնելու. թէ որ Վարչութիւնն է չգործադրողը, Սրբազան Հայրը պատասխանատու չէ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ժողովն ոչ թէ իբրեւ պատասխանատուութիւն կուզէ բացատրութիւն. ժողովը պէտք է որ գիտնայ, ոչ թէ դատելու համար, այլ ինք լուսաւորուելու համար թէ արդեօք իրաւացի պատճառներ կային իւր որոշմանն անգործադրելի մնալուն եւ ի՞նչ էին այդ պատճառները. կանոնաւորութիւնը կը պահանջէ զայս: Այս բացատրութիւնն է որ կը զլանան. — Սրբազան Պատրիարքին կը հարցնենք, Օգսէն է՞՞. կուզէ արդիլ զմեզ հարցնելէն. Տ. Մկրեան Հայրն ալ կուզէ ինք պատասխանել նորին Սրբազանութեան տեղ: Ի՞նչ ընթացք է այս:

Տ. ՂԵՒՈՆԻ ՎՐԴ. ՓԻՐՂԱԼԷՄԵԱՆ — Նախկին Քաղաքական ժողովոյ համարատուութեան տեղեկագիրը կայ. թէ որ լոյս առնելու համար Սրբազան Պատրիարքէն բացատրութիւն կը պահանջուի, հարկաւ այդ տեղեկագրէն ալ բացատրութիւն եւ լոյս կրնայ առնուիլ:

Տ. ՄԱՏԹԷՈՍ ՎՐԴ. ԻԶՄԻՐԼԵԱՆ — Նախորդ Քաղաքական ժողովոյ 1870 Մայիս 3 թուականի ԺԵ. նիստին մէջ այսպէս կը կարգաւորուի « Աղթամարցիք բազմութեամբ ներկա « յանալով Խաչատուր եպիսկոպոսի կաթողի-

« կոսութեան խնդրոյն վախճան տալու համար « թախանձանօք խնդիր մատուցին: Ժողովն « առանձին Ս. Պատրիարքին եւ Սիմէօն Սրբազանին հետ խորհրդակցելով տեղեկութիւն « առաւ որ Աղթամարայ խնդրոյն վերաբնու- « թիւնը՝ որ Ընդհանուր ժողովը Սրբազան « Պատրիարքին յանձնած էր, գեա Համագու- « մար ժողովին ներկայացուցած չէ: Սրբազան « Պատրիարքը յայտնեց թէ՛ Խաչատուր եպիս- « կոպոս առ այժմ վանք մը կրթալ սպասել « կուզէ, մինչեւ իւր խնդրոյն վերջաւորու- « թեանը, եւ հարցուց թէ կրնայ՞ արդեօք « այս մասին տնօրէնութիւն մ'ընել: Ժողովը « յայտնելով որ իրեն չվերաբերիր այս խնդ- « րոյն միջամտութիւն ընել, յանձնեց Սրբա- « զան Պատրիարքին եւ Սիմէօն Սրբազանին « տնօրէնութեանը »:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Սրբազան Պատրիարքէն կարծիք կուզէք, որպէս թէ իր կարծիքն արդէն յայտնած չըլլայ այս ատեանին մէջ . . . :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — (միջանկեալ կերպով) — Կարծիք ուզող չկայ:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Կարծիք կամ պատասխան հոգ չէ՛, բառը դուք որոշեցէք:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Պատճառ կը հարցընենք:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Ահաւասիկ Սրբազան Պատրիարքը միեւնոյն հարցման պատասխանած է արդէն ժողովոյս մէջ, ինչպէս ԺԱ. նիստին արձանագրութեան 473 երեսի սա՛ հատուածը կը ցուցնէ. (եւ կը կարգայ հետեւեալը) « Այլատեսանին ըսած Համագումար « ժողովն ես չեմ ճանաչեր. քանի որ Խրիմեան « Պատրիարք է, մի յուսաք որ Համագումար « ժողովը գումարէ. քանի մը խեղճ տէրաէրնե- « րով ժողով կազմելով ի՞նչպէս կարելի է այս- « պիսի ծանր խնդիրներու որոշում տրուիլ. « Հայաստանեայց եկեղեցւոյ ժողովները միշտ « այսպէս եկեղեցականօք եւ աշխարհականօք « խառն եղած են. Հայաստանեայց եկեղեցւոյ « մէջ լոկ եկեղեցականէ բաղկացած Հ-՝-՝-՝ « անունով ժողով չկայ « եւ ծոկեցաւ Սրիստա- « կէս Սրբազանին ալ հարցուց, « այնպէս չէ՞,

« Սրբազան եղբայր « ըսելով »:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ըսել է որ, Օգսէն է՛՛ Ֆէնտի՛, Սրբազան Պատրիարքին բացատրութիւն տալուն դէժ չէ՛ք դուք: այլ կուզէք որ դուք իր բերնէն տաք բացատրութիւնը: Ահա՛ իրաւցնէ բացատրութիւն մը. Սրբազան Պատրիարքը Հ-՝-՝-՝-՝ անունով ժողովը չ'ընդունելուն համար չէ՛ գումարուեր Համագումար ժողովը: Ահա բնական պատճառն ընդհանուր ժողովոյ որոշման չը գործադրուելուն:

ԱՐՍԼԱՆԵԱՆ Ս. ՓԱՇԱՅ. — Սրբազան Պատրիարքն իրեն եղած հարցման ինչ պիտի պատասխանէ, նաեւ պիտի պատասխանէ՞ մի թէ՛ եւ չգիտեմ. բայց խնդիրը հին ըլլալով, Սրբազան Հօր Պատրիարքութեանէն առաջ անոր վրայ եղած դարձուածքներն՝ եթէ ժողովը չընտրէ ինձ թող տալ, պատմեմ. զի այս խնդիրը շատ հին է, 1866 էն սկսած եւ երջանկայիշատակ Պօղոս Պատրիարքի օրէն մընացած. նոյն միջոցին անցած իրողութեանց անձամբ մասնակցած ըլլալով՝ ունեցած տեղեկութիւններս ասոնք են: — Աղթամարայ Կաթողիկոսական ընտրութիւնը թեմականաց ձեռօք կատարուելէ ետեւ, Պօղոս Պատրիարքն այս խնդրոյն մէջ ինչ ընթացք բռնելու համար բնականաբար խորհուրդ կը հարցնէ, եւ նոյն միջոցին Էջմիածնայ եւ Սոյոյ աթոռներն ալ թափուր մնացած էին. ուստի Ընդհ. Ժողովն այս երեք աթոռները մէկէն թափուր համարելով՝ կաթողիկոսական յանձնաժողով մը կը կազմէ եւ խնդիրն անոր կը յանձնէ. սոյն յանձնաժողովոյ գործողութեանց տեղեկագիրը հրատարակուած եւ արդէն ամենուն ծանօթ ըլլալով, անոր մանրամասնութեանցը չեմ մասնէր: Յանձնաժողովն Ընդհ. Ժողովոյ որոշմանը համեմատ ինչպէս Էջմիածնայ, նոյնպէս Սոյոյ եւ Աղթամարայ աթոռոց համար ալ +՝-՝-՝-՝ ընտրել տուաւ, որովհետեւ Համագումար եկեղեցական ժողովն անվաւեր վճռած էր Սոյոյ եւ Աղթամարայ աթոռոց վրայ բռնացող երկու ինքնակոչ կաթողիկոսները, եւ թէ՛ եւ Էջմիածնայ կաթողիկոսական ընտրութիւնը վերջացաւ, բայց միւս երկու աթոռներունը չկրցաւ գործադրուիլ. հետզհետէ պարագաներէն ստիպեալ Պօղոս Պատրիարք իր ընթացքը մեղմացուց, նա՛ որ առաջ Սոյոյ Նիկողայոս եպիսկոպոսին

Եւ Աղթամարայ Խաչատուր Սրբազանին վրայ ամենէն աւելի ծանր խօսքեր ըսած էր, սկսաւ գործը կամաց կամաց թեթեւցընել, եւ այն աստիճանի հասուց՝ որ անվաւեր դատուած երկու Կաթողիկոսներն ալ հաստատել պէտք պիտի ըլլար, եթէ Ժողովներն իրեն կամակից գտնուէին: Սակայն մեք անոր Համագումար ժողովոյ վճիռը ցոյց տուինք. նա բացարձակ կերպով յայտնեց թէ այն վճիռը հասուց քննութեան արդիւնք չէ եւ անապարանօք եղած է. ասոր վրայ վիճակաւոր եպիսկոպոսները բերել տուաւ, եւ խորհուրդ հարցնելով՝ կերեւայ որ անոնցմէ ալ բան մը չհասկըցաւ, ինչպէս որ ինք ետքէն կը խոստովանէր: Հուսկ յետոյ Իրաց դժուարութեան ելք մը գտնելու համար Մայր աթոռին զիմելու հարկը յայտնեցինք Ընդհ. Ժողովոյ մէջ. նոյն ատեն տակաւին Սոս գործն ալ վերջացած չէր. սակայն Ընդհ. Ժողովը չընդունեց Մայր աթոռին զիմելու առաջարկութիւնը, եւ խնդիրը թողուց իւր տարտամ վիճակին մէջ: Նոյն միջոցին Պօղոս Պատրիարքը Համագումար ժողովոյ վճռոյն գործադրութիւնը յարմար չդատելուն ուրիշ կարեւոր պատճառ մ'ալ գտած էր, զոր խորհրդարար Իմացուց, եւ ըստ որում այսօրուան նիստը զընդհակ է, կրնամ յայտնել զայն: Այն ատենները Ընդհանուր անունով ազանդ մը երեւան ելած էր մայրաքաղաքիս մէջ, որոյ հետեւողներն եկեղեցին բարեկարգելու պատրուակաւ մաշտոց մը շիներ հրատարակեր էին, Զիլինկերեան վարդապետը եւ ուրիշ քանի մը անձինք՝ որոնց անունը չեմ յիշեր, իրենց պարագլուխ ունենալով. ասոնք առաջարկութիւն կրնեն եղեր Աղթամարայ Խաչատուր եպիսկոպոսին իրենց զուրի ըլլալ եւ նոր եկեղեցի մը կազմել, խոստանալով ընդունիլ զինքն իրեւ Կաթողիկոս, եւ հաւատարմացնելով թէ դրոշն պաշտպանութիւն ալ պիտի գտնեն: Այս պատճառաւ Պօղոս Պատրիարք չէր համարձակել Համագումար ժողովոյ վճիռն Աղթամարայ մասին ի գործ դնել, եւ որպէս զի նոր ազանդ մը եւ անոր պարագլուխ Կաթողիկոս մը չը հաստատուի, Խաչատուրն Աղթամարայ աթոռին վրայ հաստատել կը ճգնէր:

ԱՂԱԲԷԿԵԱՆ Մ. ԷՖ. — Ինչ որ Արսլանեան Ստեփան փաշայ պատմեց, ես ալ այն-

պէս գիտեմ. բայց Պօղոս Պատրիարք ուրիշ պատճառ մ'ալ յայտնած է, որոյ ունկնդիր եղած եմ. այն է առանց ամբաստանելոյն ներկայութեան եւ առանց զայն լսելոյ վճիռ տրուելին, որ եկեղեցական կանոնաց հակառակ կը համարէր: Վերջապէս Ընդհանուր ժողովը Վարչութեան յանձնեց թէ՛ Սոսյ եւ թէ՛ Ազգամարայ խնդրոց կարգադրութիւնը. թէպէտ Սիս մարդ զրկուեցաւ եւ անոր ընտրութիւնն եղաւ լմնեցաւ. բայց հիմայ խնդիրն այն է թէ 2 անվաւեր կաթողիկոսներն ալ 6—7 տարի առաջ դատաւարտուելու են, այս եկած տեղեկագիրը բաւական չէ ըստ իմ հայեցումս. որովհետեւ եկած թղթերէն միայն քննութիւն եղեր եւ արդիւնքը մէջ տեղ դրուել է, ասով քննութիւնն աւարտուած չհամարուիր. մեք կը փափաքէինք որ տաճկական օրինաց համեմատ ամբաստանաւորները կանչուելով Իւսթինուս ընէին. փորձով գիտենք որ մէկ քանի գաւառաց, ինչպէս Մոկաց, Ազգամարայ եւ այլն. ժողովուրդք խորագէտ են եւ մեզ ալ կրնան խաբել. թէ եւ ուսում եւ կրթութիւն չունին, բայց խաբելու այնչափ վարժ են որ տեսնողը կը զարմանայ. Խաչատուր Եպիսկոպոսի դաւով թէ եւ այդ կրօնաւորն եղեռնագործ է թէ չէ լաւ չգիտեմ, Աստուած գիտէ. բայց իբր Սրբազան մարդ հասարակաց կարծիքը պըղտորած է, ամենքը բռնաբար յափշտակելով եւ մանաւանդ ծանր անկարգութեանց գործիք ըլլալով. հետեւապէս որչափ ալ պաշտօնական կերպով մաքրուի, զարձեւալ հասարակաց կարծեաց առջեւ դատաւարտուած կը համարուի. իմ կարծիքս այս է որ ժամադատու լինինք այս մասին, կամ Մայր Աթոռոյն գիտենք եւ կամ շուտ անօրինակք ինչ որ պէտք է քննել. տակաւին շատ կրնամ ճառել այս նիւթին վերայ. բայց հոս դատարան չէ, եւ այսչափը հերիք կը համարիմ:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Աղարէկեան էֆ. երկու կէտ մէջ բերաւ. նախ թէ ինչո՞ւ հարցաքննութիւն չէ եղեր, եւ երկրորդ թէ հասարակաց կարծեաց առջեւ արդէն դատաւարտուած է: Աւագ հարցաքննութիւնն այն է, որ Ընդհ. ժողովոյ նախորդ որոշումն ետեւ պիտի ըլլար եւ չէ եղած, եւ մեք ալ չէինք կրնար ընել, վասն զի նախորդ Վարչութիւնը

չէր ըրած, եւ եթէ ժողովը վերահաստատէ իւր նախորդ որոշումն, այն ատեն կրնայ ըլլալ. Իսկ եթէ ժողովը Աղարէկեան էֆ. ի ըսածին պէս հասարակաց կարծեաց դատաստանը բաւական սեպէ, եւ Վարչութեան զնա գործադրէ ըսէ, այդ ուրիշ:

ՊԵՏԵՐՆ Թ. ԷՖ. — Փախաղեան էֆ. Ընդհ. ժողովոյ ընելիքը կը գծէ: բայց նա իր ընելիքը տակաւին չորոշեց, եւ խնդրոյն խորը չմտանք, իրաւ է թէ ունենք մտան, բայց վիճաբանութեան սահմանէն անդին անցան, եւ կը ցաւ ըսել որ դիւանին կողմէ ալ ազգաբարբութիւն չընդունեցին. Ընդհ. ժողովոյ նախորդ որոշումը գործադիր իշխանութիւնն ինչո՞ւ չէ գործադրեր, այս հարցման պատասխանը գեռ չտեսցանք. պատճառը պէտք է գիտնամք որ ըստ այնմ խնդրոյն խորը մտնամք. ես պատասխանատու մարմինը կրնամ ցոյց տալ. գործադիր իշխանութիւնն Ազգ. Վարչութիւնը չէ, վասն զի նա իրեն պատկանեալը կը գործադրէ. գործադիր իշխանութիւնը Սրբազան Պատրիարքն է. անոր միայն կը պատկանէր Ընդհ. ժողովոյ այդ որոշումը գործադրել, ինչպէս որ նախորդ Քաղ. ժողովոյ ժե. նստի արձանագրութիւնը՝ զոր Տ. Մատթէոս վարդապետ պահ մը առաջ յիշեցուց եւ կարգաց, լաւ կը հաստատէ այս ըսածս. հոն կըսէ թէ « Ազգամարայ վերաքննութեան գործն Ընդհ. ժողովը Համագումարին յանձնած ըլլալով Վարչութիւնը չէ միջամտեր, եւ իրաւունք ալ ունէր չմիջամտելու, վասն զի այդ որոշման գործադրութեան պաշտօնը Սրբազան Պատրիարքին պատկանելով, անոր պարտքն էր գումարել Համագումար ժողովը, եւ Ընդհ. ժողովոյ որոշման համեմատ խնդիրը հոն ներկայացընել, Աւստի իմ պարտքս է նորէն Ս. Պատրիարքին ուղղել իմ հարցումս եւ իմանալ թէ ինչ բանաւոր պատճառներ արգելք եղան Ընդհ. ժողովոյ որոշումը չգործադրուելուն կողմէս, Աստեա պետ էֆ. այս հարցումս կրկնեցէք:

ՍՐԲԱՋԱՆ ՆԱԽԱԳԱՆ. — Վերջապէս, Աստեապետ էֆ. կարգն եկաւ ինձ խօսելու եւ պէտք է խօսիմ, որպէս զի կասկածները փարսախս. շատ անգամ ըսեր եմ, չարաթ մը առաջ եղածը Խրիմեան կը մոռնայ, ես ալ մըտածեցի թէ պատճառ մը կայ կամ չկայ, եւ

չկրցի յիշել. շայն հիմայ բացատրեմ: Ընդհանուր ժողովն սրտէր է Համագումար ժողովին յանձնել, թէ եւ իմ կարծեացս հակառակ որոշում մ'էր այն. սակայն կը խոստովանիմ հրապարակաւ որ չգործադրուելուն պատճառն ուրիշ բան չէր, եթէ ոչ ազգային գործոց ըզբաղմունք իրարու վրայ գալով ժամանակ չէին թողած գործադրելու. թերեւս ուրիշ պատճառ մ'ալ կար խիստ իրաւացի, բայց ես այն նպատակաւ չէ որ չեմ գործադրած ժողովին որոշումը: Միեւնոյն տարուան մէջ կը պատահին Սոսյ եւ Ազգամարայ գործերը, Սոսյ անվաւեր կաթողիկոսը կուգայ եւ կը վերադառնայ որ եւ է եղանակաւ եւ պատճառը չը հարցուիր եւ չլինաւ ուրիշ. եթէ երկու ամիսոց գործոց մէջ պարագաները մաս առ մաս քննելով նայինք, երկուքին համար ալ պէտք էր ընել այդ որոշումը. սակայն այնպէս չէ եղած, մէկը միայն յանձնուել է Համագումար ժողովին վերաքննութեան, իսկ միւսը գործադրուել է ըստ նախորդ վճռոյն. չեմ գիտեր թէ ինչո՞ւ Սոսյ խնդիրը Վարչութեան յանձնուել է գործադրել. Սոսյ Նիկողայոս Եպիսկոպոս մինչդեռ հոս էր, ան ալ բողոքներ տուած էր, բայց վերաքննութեան չյանձնուեցաւ, եւ ուրիշ կերպիւր լրացաւ Սոսյ խնդիրը: Իսկ Ազգամարայ Խաչատուր Սրբազանը թուրթ մը տուել է, որուն մէջ կըսէ թէ « այսչափ ժամանակէ հետէ կրամ տառապանքս ապաշխարանք համարեցէք եւ իմ գործս լմնեցուցէք» եւ յիրաւի քիչ տառապանք չէ 3—4 տարիէ հետէ Պատրիարքարանի մէկ սենեկին մէջ մընալը. ասոր համար էր որ Միմէօն Եպիսկոպոսին հետ առանձին խորհրդակցեցայ վանք մը զրկել զանի մինչեւ իւր գործը լմնայ: Գիտութեան արժանի է արդարեւ որ շատ առաջնորդներ Պօլիս կուգան կը մնան տարիներով, ամենեւին չհարցուիր եւ ժողովուրդը կը տուժէ. եթէ խորը քննելու ըլլանք, բոլոր յանցանքը մերն է, ուստի թողունք այդ հին բաները եւ պատճառներ չլինարունք. միայն այս Եպիսկոպոսը՝ որ այսչափ ժամանակէ ի վեր Պօլիս եկեր է, ի՞նչ պիտի ընեմք նէ՛ այն մտածենք:

ՏԱՏԵԱՆ Ա. ԷՖ. — Կը բողոքեմ Աղարէկեան Մ. էֆ. ի այն խօսքին դէմ, որով կը յայտնէ թէ հասարակաց կարծիքն արդէն դա-

տապարտած է զԽաչատուր Եպիսկոպոս. եթէ Պօլսոյ հասարակութեան համար է այդ խօսքն, զայն չճանչէր եւ ի՞նչպէս կրնայ դատել. բայց եթէ դրսեցուց համար է, անոնք ամենքն ալ հակառակը կը վկայեն եւ անոր օգուտը տեսած ըլլալնին կը յայտնեն:

ԱՂԱՔԷԿԵԱՆ Մ. ԷՖ. (Պատասխանելով) — Զեր բողոքն ինչպատ Խաչատուր Եպիսկոպոսի ուրիշ բան չ'նշանակէր. բայց միայն նորա ազատութիւնը:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Կուգեմ միայն Ս. Նախագահին զիտողութեան պատասխանել կըսէ թէ երկուքն ալ միեւնոյն ժամանակի մէջ դատաւարտուեցան եւ միեւնոյն վճիռն ընդունեցան, եւ մէկը միայն իր դատաւարտութիւնը կրեց, իսկ միւսը վերաքննութեան յանձնուեցաւ: Այս խօսքին մէջ թերի մաս մը կայ. Նիկողայոս Եպիսկոպոսին համար Պօղոս Պատրիարք կոնդակ մ'ալ հրատարակած է, որուն մէջ կըսէ թէ այնպիսի պիտի անցեալ մը ունի նա, որ եթէ ժողովուրդն իսկ ուզէ, եկեղեցին չկրնար թոյլ տալ: Իրաւէ որ Նիկողայոս Եպիսկոպոս ալ վերաքննութիւն պահանջեց, սակայն չ'գիտցաւ համբերել եւ աւելի ծանրացուց իւր վիճակը: Վերջին արարքն ալ պատմեմ. Պօլսէն առանց Վարչութեան հրամանին եւ անկախ կաթողիկոսութիւն ընելու խորհրդով գնաց նախ թէքիրտաղ իբրեւ կաթողիկոս պատարագեց հոն. անկէ Սիս գնաց Եպիսկոպոսներ ձեռնադրեց. ասոնք ալ իւր վերջին ապօրինաւոր արարքներն են: Իսկ Խաչատուր Եպիսկոպոս հոս գալէն ի վեր անընդհատ վերաքննութիւն կուզէ. ինչո՞ւ զլանամք:

ՍՐԲԱՋԱՆ ՆԱԽԱԳԱՆ. — Սոսյոյ է որ Պօղոս Պատրիարքն այդ մտքը կոնդակ մը հրատարակել է, սակայն ի վերջոյ, ինչպէս պահ մ'առաջ Ստեփան փաշան ալ յայտնեց, այդ կոնդակն ետ առել է:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Գրով ետ չէ առած:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խնդիրն ինքնին վիճաբանութեան կը մտնէ, սակայն ուղղութիւն մը պէտք է տալ: Վիճաբանելի կէտը նախ եւ առաջ սա է. Ընդհանուր ժողովը՝ 1870 Յուն

վար 23 ին նիստին մէջ Ազթամարայ խնդիրը Համագումար ժողովին յանձնելու որոշում քրէր է . այս որոշումը պիտի գործադրուի՞ թէ ո՞չ : Ահա՛ այս է վիճարանելի բուն կէտը , եւ ասոր վրայ վիճարանութիւնը բացուած կը հըրատակեմ :

ԻՓԷԿՃԵԱՆ Հ . ԷՖ . — Երաւ է որ Ընդհանուր ժողովն այդպիսի որոշում մ'ըրած է , եւ սակայն Վարչութեան տեղեկագիրը չբացատրէր թէ ինչո՞ւ այդ որոշումը չէ գործադրուած , ոչ ալ կարծիք մը յայտնած է իւր կողմէն այս մասին . անշուշտ Ընդհանուր ժողովին իրաւունք ունի այս տեղեկագիրն ետ գարձնել եւ ըսել թէ մեր պահանջածն այս չէ : Բայց մտածենք թէ բանաւոր կըլլա՞յ արդեօք այս պահանջումը , միթէ Ընդհանուր ժողովոյ որոշումն անդառնալի՞ է . ո՞չ ապաքէն դեռ անցեալ նստին բրած մէկ որոշումը Յ վայրկեան կտքը ջնջեց . մենք արդեօք բանաւոր բան մ'ըրած կըլլա՞նք այս խնդիրը Համագումար ժողովոյ յանձնելով : Այս տեղեկարեր խառն Յանձնաժողովը եւ Սահմանադրութիւնն իրարու հետ ի՞նչ յարաբերութիւն ունին , Սահմանադրութիւնն այնպիսի վիճակի մը մէջ դրած է որ մէջէն ելնելը դժուարին է . հարցընենք , թէ արդեօք Համագումար ժողովոյ իրաւասութիւնն աւելի բարձր է թէ Կրօն . եւ Քաղ . Ժողովոյ կողմէ կազմեալ խառն Ժողովոյ իրաւասութիւնը :

Ընդհ . ժողովն իրաւունք անգամ չունի , վասն զի իբրեւ օրէնսդիր չներկայանար այս խնդրոյն մէջ , այլ իբրեւ դատաւոր . այս ալ մեր Սահմանադրութեան խոշոր թերութիւններէն մէկն է . դատաւարտեալը Համագումար ժողովոյ վճռոյն դէմ բողոքեր է . ո՞ր ատ'ա ն այդ բողոքն ու վճիռն իրարու հետ բերեր քրններ եւ հաստատեր է Համագումար ժողովոյ վճռոյն արդար ըլլալը . մեզի եկած տեղեկագրին մէջ խոր լուծիւն մը պահուած է այս մասին եւ մեծ համեստութիւն մը (եթէ կը ներուի ինձ այս բողոք գործածել) կը փայլի : Եթէ վերաքննութիւնն իբրեւ դարման ՚ի գործ պիտի գրուի այս պարագային մէջ , իբրեւ դատաւոր եւ ոչ իբրեւ օրէնսդիր մտնանք խնդրոյն մէջ . ես չեմ ըսեր թէ բարձրաստիճան անձ մ'է , չգատուի . պէտք է դատուի , եւ եթէ անպարտ

է երեւան ելլայ . բայց եթէ պարտաւոր , ո՞րչափ ծանր է արդարացնել . դիտէք արդէն թէ Սոսյ խնդիրն ի՞նչ մեծամեծ յուզումներ հանեց եւ մինչեւ մեր Ս . էջմիածնայ Վեհ . կաթուղիկոր բարկացուց . եթէ անզուշտարար արգարացնելու ելլենք եւ զինքը հաստատենք կաթուղիկոսութեան պաշտօնին մէջ , իսկոյն մեր Վեհափառն իրաւունք կուեննայ ըսելու . « դուք անձեռնահաս էք ասանկ խնդրոց մէջ , ինչպէս արդէն ըսեր էի . անա՛ յոճրագործ մը դուք կաթուղիկոս կընէք » : Անոր համար ըսի թէ իբրեւ դատաւոր խիստ մեծ զպաշտութեամբ քննելու եմք , եթէ յանցաւոր է յանցանքն երեւան հանելու համար եւ եթէ անպարտ է արգարացնելու համար . կը մտածեմ որ եթէ այս կէտիս մէջ փոքր ինչ անզուշտութիւն ընենք եւ կասկածի նշոյլներ անգամ ցոյց տանք , մեր Վեհափառն իրաւունք պիտի ունենայ զմեզ շարաշար յանդիմանելու : Հիմակու հիմա այսչափ :

ՂԱԶԱՐԱՍԵԱՆ Ք . ԷՖ . — Ընդհ . ժողովն արդէն որոշեր է Համագումարին յանձնել վերաքննութիւնը . եթէ քննութեան պէտք կայ , ինչպէս որ եղած խօսքերէն կերելի , Համագումարին յանձնելն է ամենէն կարճ միջոցը . ուստի՞ ինչպէս Ատենապետ է՞ք . ըսաւ , այս կէտին վրայ պէտք է վիճարանել եւ որոշել թէ արդեօք նախորդ որոշումը գործադրելի է թէ ոչ :

ՊԷԿԵԱՆ Թ . ԷՖ . — Պահ մ'առաջ Ատենապետ է՞ք . վիճարանութիւնը կանոնաւորութեան մտցուց , բայց դժբաղդաբար չեղեցանք , եւ նորէն դժուարութիւն պիտի կրենք վիճարանութիւնն իր կարգին վերածելու համար : Եթէ կճեան է՞ք . կարծեց թէ Խաչատուր եպիսկոպոսի կաթուղիկոսութիւնը պիտի հաստատուի կամ հերքուի այս ատենանին մէջ . այնպէս չէ . Ատենապետ է՞ք . ի առաջարկութիւնը սա՛ էր թէ նախորդ որոշումը պիտի ընդունուի թէ ոչ եւ անուշաբով իբր խնդիր պիտի յուզուի : Այս մասին ես իմ կարծիքս յայտնելու համար նորէն կըսեմ թէ պարտք զգացինք նախորդ որոշման անգործադրելի մնալուն պատճառներն իմանալ . հարցուցինք թէ եւ , բայց առած պատասխաննիս զոհացուցիչ չէր . մոռացութիւնը կամ անհոգութիւնն է կղեր պատճառը , ուրիշ

բանաւոր արգելք մը չկայ եղեր . ուրեմն պէտք է այժմ նկատողութեան առնուեք թէ անգործադրելի մնացած որոշումնիս հարկ է գործադրել թէ ոչ զայն եւ անշուշտ նոր որոշում մը ընել : Եթէ նախորդ որոշման գործադրութեան անպատեհութիւններ կը ծագին ինչպէս ըսող եղաւ , պէտք է ցոյց տրուին ժողովը համոզելու եւ իւր որոշումն եթէ հարկ է փոխելու համար :

Տ . ՅՈՎՀ . ՔՀՆՅ . ՄԿՐԵԱՆ . — Ընդհ . ժողովոյ 1870 յունվար 23 ի որոշումը չգործադրուելուն պատասխանատուութիւնը մինչեւ նոյն տարւոյ հոկտեմբեր ամիսը կերթայ . որովհետեւ միեւնոյն տարւոյ հոկտեմբեր ամսուն 23 ին ուրիշ որոշում մ'եղեր է խնդիրը Վարչութեան յանձնելու եւ տեղեկագրով մը բերուելու համար . հետեւապէս Ս . Պատրիարք Հօր պատասխանատուութիւնը չէ թէ 3 տարի , ինչպէս ոմանք ուզեցին ըսել , այլ յունվարէն մինչեւ հոկտեմբեր ամիսը կը տեւէ , որ ինն ամիս ըսել է , եւ այսքան ամսոյ մէջ ո՞ր քիտէ մոռցուեր է կամ ի՞նչ անձանօթ պատճառաւ մը մնացեր է : Հիմա երկու որոշում ունի Ժողովը , մէկն է Համագումար ժողովոյ վերաքննութեանը յանձնել եւ միւսն է Վարչութեան յանձնել որ տեղեկագիր բերէ . տեղեկագիրն եկած է . ժողովը թո՞ղ վիճարանի , եւ եթէ կուզէ նախորդ որոշումը գործադրել , թո՞ղ քուէարկութեամբ որոշէ :

ԻԹԻՒՆԵԱՆ Կ . ԷՖ . — Ազթամարայ խնդիրն երկրորդ անգամ Համագումար ժողովին յանձնելու որոշումն երկար վիճարանութեամբ եղած է , որուն ներկայ գտնուողները կը յիշեն թէ ի՞նչ պատճառ մէջ բերուեցաւ այն ատեն Ընդհանուր ժողովոյն մէջ : Պատճառն ուրիշ բան չէր , եթէ ոչ հանդուցեալ Պողոս Պատրիարքին այն յայտարարութիւնը թէ Համագումար ժողովոյ վճիւն անգործադրելի է , թէ աճապարանքով եղած է եւ թէ ետքէն ելեւան ելած պարագաներ կան , եւ այն . ասոնք յիշուելով էր որ Համագումար ժողովոյ վերաքննութեան յանձնել որոշուեցաւ : Այս որոշումէն քանի մը ամիս ետքը նոր պարագայ մը վրայ դալով տեղեկագիր խօսք անցաւ ժողովին մէջ , եւ անկէ ծագում առեր է այս յանձնաժողովը

եւ անոր բերած տեղեկագիրը . բայց արդեօք ժողովին սպասածն այս տեղեկագիրն էր , չեմ կարծեր : Հիմա խնդիրն այն է թէ Համագումար ժողովին յանձնել հարկ է թէ ոչ . իմ կարծիքս գարձեալ նոյնն է , ինչ որ այն ատեն յայտնեի եմ . պէտք է որ խնդիրը նորէն Համագումար ժողովին յանձնուի : Ընդհանուր ժողովոյ այս որոշումը գրական եւ բացորոշ է , պէտք է գործադրի :

ՄԱՐԳԱՐԵԱՆ Յ . ԷՖ . — Քանի որ կանխաւ որոշուեր է Համագումար ժողովին յանձնել , եւ ինչ ինչ պատճառներով նոյն որոշման գործադրութիւնը մնացեր է , գարձեալ նոյն ժողովին յանձնուիլը կառաջարկեմ :

Տ . ԳԷՈՐԴ . ՔՀՆՅ . ԱՐԾՐՈՒՆԻ . — Մի եւ նոյն առաջարկութիւնը կը կրկնեմ , մեր Սահմանադրութեան եւ Ս . Աւետարանին համաձայն պէտք է եկեղեցականին դատաստանը Հոգեւորական ատենի մէջ կատարուի :

ՏԱՏԵԱՆ Ա . ԷՖ . — Եկեղեցական Համագումար ժողովը վճիւր մը տուեր եւ ըսեր է թէ Խաչատուր եպիսկոպոսի ընտրութիւնն անվաւեր է . յետոյ վիճակային եպիսկոպոսներն ալ Ժողով դուժարեր եւ մի եւ նոյն վճիւր հաստատեր են : Բայց ՚ի վերջոյ երկուքն ալ սրխայեցանք ըսեր են , ինչպէս կը յայտնէ Եթիւճեան է՞ք . այս ինչպէ՞ս բան է չեմ հասկընար . արդեօք դիւանը կրնա՞յ բացատրութիւն տալ այս մասին :

Տ . ԻՈՐԷՆ ԵՊԻՍ . — Ասկէ 7 տարի առաջ մեր եկեղեցւոյն մէջ ցաւալի դէպք մը պատահեցաւ , այնքան ցաւալի , որչափ անոր վրայի արեան աճաւոր հետքերը ցարդ սարսուռ կազդեն ամենուս : Եկեղեցին փութացաւ ՚ի քննութիւն , եւ համարուեցաւ թէ Արդարութիւնը կատարած էր իւր գործը : Համագումար ժողով մը տուաւ իւր վճիւր , զոր վիճակային եւ Ընդհանուր ժողովներ ընդուներ են եւ հաստատեր , ամբաստանելոյն կաթուղիկոսական օժումն անվաւեր հրատարակելով : Բայց ամբաստանեալը բողոքեր է այս վճռոյն դէմ , եւ Ընդհանուր ժողովս դատը դարձուցեր է անվճատու ժողովն : Ահա այս որոշումն է որ անգործադրելի է մնացեր երեք տարիէ ՚ի վեր :

բողոքը կայ, բայց ժողովը եւ քննութիւն համար կը կենան ամբաստանելոյն առջեւ: Ինչո՞ւ. — ինձ կերելի թէ պատճառը նոյն իսկ երեսփոխանական ժողովին սոյն որոշման պակասութեանը մէջ է: Եթէ մեք չըքնենք զայդ, տարակոյս չկայ թէ դարմանը չկրնանք գտնել: Քաջատուր եպիսկոպոս չընդունելով Համագումար ժողովոյն վճիռը բողոք բարձր է Ընդհանուր ժողովն. սա ի՞նչ պէտք էր ընել: Արդարութեան կանոնը պէտք էր գործադրել. այսինքն՝ ցուցնել ամբաստանելոյն ատեան մը, ուր կարենար նա վճառու ատենին զէմ բրած բողոքը հաստատել, ատեան մը որ ձեռնհաս ըլլար քննել եւ հաստատել կամ ջրել ամբաստանելոյն զէմ տրուած վճիռը: Զա՞յս ըրեր է Ընդհ. ժողովը. — Ս'չ, Տեա'րք: Ընդհ. ժողովն իւր յետին որոշմամբ իբր թէ պատասխաններ է Քաջատուր եպիսկոպոսին, « Ես կը զրկեմ զքեզ այն ատեանն՝ ուրկէ դատապարտութիւն ընդուներ ես »: Այսպիսի որոշում մը տրամաբանութեան եւ արդարութեան ըսկըզբանց համաձայն չեմ գտներ, ոչ ալ եւրոպայի քաղաքակրթեալ ազգաց օրինաց կը յարմարի, եթէ անոնց օրինակին պէտք է հետեւիմք:

Ես չեմ քննել մեր առջեւ բերուած տեղեկագիրը, ինձ յայտնի կերելի որ օրինաւոր որոշման մը պտուղ չէ նա. ուստի եւ իբրու չեղած կը համարիմ: Ատենապետ էֆէնտիին հետ համամիտ եմ, եւ կըսեմ. համարինք թէ այս տեղեկագիրը չկայ, եւ ինքզինքիս զէմ առ զէմ կը գտնենք ժողովոյս առաջին որոշման. ժամանակը չը կրնար ետ առնել զայդ: Բայց անա այդ որոշումն է գոր ես թերի կը դատեմ, եւ որոյ գործադրութիւնը (եթէ այժմ անոր զիմնք) օրինաւոր արդիւնք մը չը պիտի կարենայ ընծայել: Բացատրեմ, Տեա'րք: Ի՞նչպէս վերադարձնենք ամբաստանեալ մը այն ատեանը՝ որ զինքք դատապարտեր է բողոքովին: Եթէ Համագումար ժողովն երկրորդ անգամ պիտի հաստատէ իւր վճիռը, աւելորդ է անոր զիմելը. իսկ եթէ երկրորդ վճիռով մը առաջինն ի գերեւ հանէ, ո՞վ կըրնայ մեզ վստահացնել թէ ուրիշ անգամ եւս ետ չպիտի առնէ իւր վճիռը: Կըսուի թէ պակասաւոր եղած է քննութիւնը, ի՞նչ երաշխա-

ւորութիւն կրնան տալ երկրորդին մէջ եւս պակասաւոր չըլլալու: Եւ միթէ կրնա՞յ առեան մը առանց անտեղութեան մէջ ինչպիսի իւր արդարութիւնը կատարածանաց ենթարկել վերանորոգ քննութեամբ բուն իսկ իւր արձակած վճիռն: Բայց կրնա՞յ եւ անյսելի մնալ բողոքարկութիւն հառաչանքը. ո՞չ երբէք: Աւերաքննութիւն մը պէտք է, ասոր տարակոյս չկայ. վասն զի առանց վերաքննութեան չը կրնար օրինաւոր վախճան տրուիլ այս ծանր գործոյն. բայց վերաքննութիւնն ո՞ւր պէտք է ընել. թոյլ տուք որ զայն ցուցնեմ: Ամենայն դատ իրեն ձեռնհաս ատեանը կը պահանջէ, մեծեղեւն ամբաստանութեան մը ներքեւ սքողեալ եպիսկոպոսի դատ մ'է մեր առջեւ, ո՞ւր պէտք է տեսնուի այս դատը, վերջնական կերպով արդարութեան օրինաց համեմատ լուծուած համարի եւ որոյ համար ոչ միայն ներկայն՝ այլ եւ ապագայն զմեզ չդատապարտէ: Սահմանադրութիւնն արդէն օրինադրած է որ այն կէտերուն մէջ, ուր Համագումար ժողովը ձեռնհաս չէ, պէտք է զիմէ Արարատեան մայր աթոռին: Արդ՝ կըսեմ եզրակացնելով. տեսանք արդէն որ Համագումար ժողովը վճիռ մը տուեր է, որ յետոյ վերաքննութեան է ենթարկուեր ամբաստանելոյն բողոքանաց առջեւ. տեսանք ուրիշ վիճակային եպիսկոպոսաց ժողով մը, որ նոյն վճիռը յարգեր է, կամ պարզապէս խօսելով՝ ան ալ միեւնոյն վրձիռը տուեր է. ո՞վ է ամենէն մեծը, Արարատեան մայր աթոռն է այդ: Թողունք ուրեմն որ ամբաստանեալն իւր բողոքը բարձրացնէ մինչ յայն գերագահ աթոռ, եւ անկէ ընդունի իւր վերջնական վճիռը: Աւրիշ ո՞ր եւ իցէ եղանակաւ եւս վարուիմք՝ ա՛յ ժամանակն անցած է, խնդիրը մեր ձեռնհասութենէն ելած, ուստի եւ արդարութեան վճիռը թողունք որ արձակէ այն գերագոյն ատեանը՝ որոյ զիմաց կը պատկառի ամբաստանեալն եւ ամբաստանող, Այս է անա իմ կարծիքս:

ՊՅԱՅԱՆ Յ. Ե. — Համագումար ժողովը խնդրոյն կրօնական կէտերուն մասին միայն վճիռ տուած է, բայց խնդրոյն մէջ քաղաքական կէտ ալ կայ, որ Քաղաքական ատեանի առջեւ կը քննուի. ուստի եթէ վերաքննութեան համար դարձեալ Համագումար

ժողովին յանձնուի, քաղաքական մասին քննութեան համար ալ Քաղաքական ատեանի մը առջեւ պէտք է ելնէ:

ՊԵՏԵՆՆ Թ. Ե. — Տ. Խորէն եպիսկոպոս կատարելէ թէ աւելի բարձր ատեանի մը յանձնուի վերաքննութիւնը, առարկելով թէ իրաւունք չէ վճառը ժողովին զրկել:

Ես բողոքովին հակառակը պիտի պնդեմ եւ պիտի ջանամ հաստատել թէ կարելոր է նոյն իսկ Համագումար ատեանին յանձնել վերաքննութիւնը. վասն զի վճիռ մը տուեր է առանց ամբաստանելոյն ներկայութեանը:

Հոս խնդիր մը կը ծնի. արդեօք կրնա՞յ դատապարտութեան վճիռ մը տրուիլ ըստ օրինի Հայաստանեայց եկեղեցոյ երբ ամբաստանեալն ի դատ ներկայացած չէ: Ես այնպէս կը կարծեմ թէ չկրնար ըլլալ. եկեղեցական Հարք ալ պիտի ըսեն թէ չկրնար ըլլալ: Այնպէ՞ս չէ:

Եկեղեցականաց դասէն ձայներ. — Այո՛, այո՛:

ՊԵՏԵՆՆ Թ. Ե. — (չարունակելով). — քանի որ եկեղեցական կանոնաց համեմատ առանց խօսեցնելու պէտք չէր դատապարտել, եւ քանի որ ամբաստանեալը բողոքած է, պէտք է նկատողութեան առնուլ բողոքը եւ իրաւ կամ անիրաւ ըլլալը հաստատել: Հոս ալ ուրիշ խնդիր մը կը ծնի. այն Համագումար ժողովն որ Քաջատուր եպիսկոպոսի համար վճիռ տուած է, միեւնոյն նստի մէջ Սոյ նիկողայոս եպիսկոպոսի համար ալ վճիռ տուած է, եւ երկուքն ալ միանգամայն բողոքած են. բայց Ընդհ. ժողովը երկրորդին բողոքը նկատողութեան չէ տուած: Սակայն մենք պարտաւոր չենք ըսել թէ ըստ որում մեր նախորդները չեն լսեր բողոքարկութիւն ձայնին, մեք ալ չլսենք. ո՞չ. այլ պարտաւոր ենք լսել, եւ օրինաց ու արդարութեան շաւղէն չչեղիլ. պարտաւոր ենք զԵրկել բողոքարկուին այն ատեանը՝ որ դատապարտած է զինքն իւր բացակայութեանը, եւ որ պէտք է կամ վերահաստատէ իւր տուած վճիռը եւ կամ ջնջէ. այն ատեն Ընդհ. ժողովը վերջին պարագային մէջ երբ հակասական վճիռ մը գայ, ի հարկէ չկրնար դորձադրել, եւ կը պարտաւորի զրկել բարձրագոյն ատենին, այն է Արարատեան մայր աթոռոյ:

(Ընդմիջում)

Բայց ամբաստանեալն ալ իրաւունք ունի դարձեալ բողոքելու մայր աթոռին, երբ նախորդ վճիռը վերահաստատուի. ուստի իմ կարծիքս է ամբաստանելոյն բողոքը Համագումար ժողովին զրկել, որ ինքն իր վճիռը վերաքննէ: Ես չեմ ուզեր ասկէց աւելի խնդրոյն խորը մտնել:

(Այլեւայլ կողմերէ գոհ մըմուծուին)

ԻԹԻՒՆՃԵԱՆ Կ. Ե. — Հայաստանեայց եկեղեցոյ եւ ազգին մէջ, ինչպէս ամենն ալ զիտենք, սեր ունեցած զիրքը, վիճակը, սովորութիւններն ու օրէնքները չենք կրնար Եւրոպայի արդի քաղաքականութեան հաստատած տեսակ տեսակ օրինաց յարմարեցնել. մեր եկեղեցին չունի վերաքննութեան յատուկ ատեաններ, վճառչինջ ատեաններ, — — — — — ներ, — — — — — ներ. մեր ունեցածն է պարզապէս Կրօնական ժողով մը, որ ըստ Ազգ. Սահմանադրութեան իր ձեռնհասութենէն վեր եղած խնդրոց համար Համագումար եկեղեցական ժողովոյ զիմելու կը պարտաւորի. Համագումար ժողովէն վեր Արարատեան մայր աթոռն է եւ անկէ վեր Ազգը կայ, որ մայր աթոռոյ տէրն է եւ անոր վճիռն ալ հարկաւ կըրնայ քննել: Ուրեմն խնդիրն իր պարզութեան մէջ նկատելով, կը տեսնեմք որ Համագումար ժողովը վճիռ մը տուեր է եւ իր նախագահին ընդհով յայտարարել է թէ անդուշտութեամբ եւ աճապարանքով տրուած է այն վճիռը, եւ գործադրութիւնը կախ թողով Ընդհ. ժողովոյ զիմեր է. Ընդհ. ժողովն ալ այդ յայտարարութեամբ գոհ չէ եղեր. կարծեմ ես էի Ընդհ. ժողովոյն մէջ այն ատեն ըսողը թէ՛ այսուհետեւ ի՞նչ վստահութիւն ընենք Համ. ժողովոյ վճիռներուն եւ ո՞րչափ ժամանակ պէտք է սպասենք անոր վճիռները գործադրելու համար, եւ առաջարկեցի որ Համ. ժողովոյ Ս. Հարք այս յայտարարութիւնը դրով եւ ստորագրութեամբ ներկայացնեն Ընդհ. ժողովոյ. բայց չտուին: Հիմայ անոնցմէ ոմանք վախճանած են, ոմանք ալ հոս չեն: 3—4 տարի առաջ նորէն Համագումար ժողով գումարելու որոշում կը տրուի, երբ ամբաստանեալն ալ ներկայ էր եւ կը բողոքէր, եւ խնդիրը կը յանձնուի Համ. ժողովոյ վերաքննութեան. սակայն այս որոշու-

մը չգործադրուի մինչև ցարդ : Այժմ առաջարկութիւն կը լլայ Խորէն եպիսկոպոսի կողմէն խնդիրն աւելի բարձր ասեան մը հանել, այն է մայր աթոռոյն յանձնել, առարկելով թէ Համ. ժողովոյն եթէ վերադառնայ եւ իւր առաջին վճռոյն հակառակ նոր վճիռ մը տայ, մեծ անտեղութիւններ կրնան ծաղիլ : Սակայն այս առաջարկութեան մէջ նկատողութեան արժանի կէտ մը կայ : մայր աթոռը չճանչէր Աղթամարայ կաթողիկոսութիւնը, ոչ ալ Աղթամարցիք կը ճանչեն դմայր աթոռն եւ կրնողունն անոր վճիռը : Ըսել է որ այս խնդիրը մայր աթոռոյ որոշման յանձնելն այնպիսի լարելիքոսի մը մէջ ձգել է, յորմէ դուրս հանել դժուարին է եթէ ոչ անհար : Ըստ իս՝ եթէ այս խնդրոյն մէջէն ելնելու ճար մը կայ, այն ալ հոս կրնայ ըլլալ : ուստի Խորէն կրսեմ որ այս խնդիրը դարձեալ Համագումար ժողովոյ պէտք է յանձնել :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ . — Աւելի իբր Ատենապետ քան իբր երեսիտիսան՝ մէկ քանի խօսք կուզեմ ընել : — Ընդհանուր ժողովոյն նախորդ որոշումն այս խնդիրը Համագումար ժողովոյ դարձնելու մասին երբ սպորինաւոր կը հրատարակեն Եւրոպայի օրէնքներէն օրինակ բերելով, իբրեւ Ատենապետ իմ պարտքս է յայտնել որ Ընդհանուր ժողովոյ այդ որոշումն սպորինաւոր չէ : Այլ թէ օրինակ բերելու դերութիւնն անընդունելի կը դառնաւ : արդարութիւնն ամեն տեղ մի եւնոյն է կամ անանկ պէտք է ըլլայ : Հետեւաբար ըստ իս Խորէն Արքայան լաւ բնաւ որ եւրոպայի օրէնքները վկայութեան կոչեց : Եւրոպայի քաղաքակրթութենէն աւելի կատարեալ չէ մերինը : Բայց եւրոպայի օրինաց արամագրութիւնները դէմ չեն դար, այլ կը հաստատեն մեր ըրածը : դատի մը վերաքննութիւնը մի եւնոյն ասեանի մէջ ըստ օրինի կը լլայ մէկ քանի պարագաներու մէջ, երբ ամբաստանելոյն բացակայութեանը արուած է առաջին վճիռը, երբ առաջին անգամ այնպիսի սխալմունք կամ մտացմունք տեղի ունեցած են՝ որք խնդրոյն վերաքննութիւնը կը հարկադրեն : Չալով ուրիշ կէտի մը որ յառաջ բերուեցաւ, իրաւ է որ Սահմանադրութիւնը կը նախատեսէ կրօնական խնդիրները Մայր աթոռին յանձնելու պէտքը :

Բայց ե՞րբ, — երբոր Համագումար ժողովն իր ձեռնհասութենէն վեր դասէ խնդիրը : ուրիմն Մայր աթոռին չենք կրնար յանձնել Աղթամարայ խնդիրն առանց Համագումար ժողովոյ որոշմանը : Ահա այս երկու կէտն էր որ կուզէի ուզել :

ԱՂԱՅԷԿԵԱՆ Մ. ԷՅ . — Աղթամարայ խնդիրը բոլորովին կրօնական չէ՝ լոկ ծխից եւ արարողութեանց վերաբերեալ խնդիր չէ : այլ կէս կրօնական եւ կէս քաղաքական խնդիր մ'է : Պօլսի Պատրիարքարանն ու ժողովներն իրաւունք չունին քննելու եւ միջամտելու քանի որ անկախ կաթողիկոսութիւն մ'է, ուղէնէ չը ճանչնի զմեզ, միթէ մեք ի՞նչ որոշում ընենք՝ պիտի ընդունի՞ն անոնք : ամենեւին չեն մտիկ աներ, կաթողիկ կը լինինք, բողոքական կը լինինք կրօնն եւ չեն ընդունիր : Պատրիարքարանն Առաջնորդ անգամ զրկելու արածութիւն չունի հոն : միայն Զէջնէ իրաւունք մ'ունի : Ես երբեմն հրապարակաւ ըսի թէ Չալալեան եպիսկոպոսը Ներսէս կաթողիկոսին մարդասպանն է :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ . (ընդմիջելով) — Իրնդրէն կը շեղիք :

ԱՂԱՅԷԿԵԱՆ Մ. ԷՅ . (շարունակելով) — Օրինակ մ'է մէջ բերածս : Կառավարութիւնն անհարին դատեց քննել այդ դատը, մտած զայցած մարդու մը համար քննութիւն չկրնար ըլլալ ըսելով : Ասով հասկըցրնել կուզեմ թէ այս տեսակ բաներու քննութիւնը դժուարին է, կը տեսնեմ թէ շատ հաճութիւնունն այս խնդիրը լինցընել : ես իբր հայ քրիստոնեայ կը ինայեմ Համագումար ժողովն որ այս դժուարին խնդրոյն մէջ չմանէ, ինքն ալ չգիտէ թէ ի՞նչ ընէ եւ ի՞նչ պէս դուրս ելնէ այս խնդրոյն մէջէն : կարծեմ լաւ կը լլայ թէ որ Վարչութեան թողունք, Սոս խնդրոյն պէս այս ալ գործադրէ լինցընէ :

ՂԱԶԱՐԱՍԵԱՆ Ք. ԷՅ . — Քանի որ ամբաստանեալը վճիռ տուող ասեանին մէջ ներկայ չէ գանուած, եւ հիմա կը բողոքէ, պէտք է կրկին նոյն ասեանին յանձնել : Ասանկ խնդիրներն Արարատեան մայր աթոռոյն յանձնելը, ինչպէս կառավարիչ Խորէն Արքայան, թէ

եւ Սահմանադրութիւնն ալ կը արամադրէ, առկայն այդ արամագրութիւնը գործադրել կրկին Համագումար ժողովոյ իրաւունքն է, հարկ տեսնէ՛ նէ կը դիմէ մայր աթոռին : Մանաւանդ ուրիշ կէտ մը կայ, զոր յիշեցնել պարտ կը համարիմ : Արարատեան մայր աթոռոյ ասեանը մեր կրօն. ժողովին պէս Աղջին կողմէն ընարուած դուռ ազգային ասեան մը չէ, զոր կարենանք ազգային բարձր ասեան կոչել : ուրիշ բան է եթէ խնդիրն օտար ասեանի յանձնել կուզենք : ապա թէ ոչ դուռ ազգային ասեանի մը պէտք է յանձնել այս խնդիրը :

ԳԻՍԱԿ Թ. ՊԷՅ . — Խորէն Արքայանի առաջարկութիւնն այն ասեան միայն կրնայ ընդունուիլ, երբ Համագումար ժողովն իր առաջին վճռոյն հակառակ նոր որոշում մը տայ կամ իւր տալիք տեղեկագրին մէջ խնդրոյն իւր ձեռնհասութեանէն վեր ըլլալը յայտնէ : Արդէն Ատենապետ է՞ք : այս կէտերը լաւ բացատրած ըլլալով, բոլորովին անոր ձայնակից եմ :

ԱՐԱՊԵԱՆ Մ. ԷՅ . — Տեղեկագիր մը եկած է եւ նախկին որոշման մը վրայ Աղթամարայ տեղեկագիր է կրսուի : ձայն մը կառնում Ատենապետ է՞ք . ի կողմէն, որ կըսէ : « մեր ուզած տեղեկագիրն այս չէ » : երեսիտիսանաց շատերը կը խօսին եւ եղած խօսքերը չեն համապատասխանէր Ատենապետ է՞ք . ի : Խորէն եպիսկոպոս Արարատեան մայր աթոռոյ խօսք կընէ, միւս մը լուսահոգի Պօղոս Պատրիարքին յայտարարութիւնները մէջ կը բերէ : բոլոր այս խօսքերն Ատենապետ է՞ք . ի զուրցածին չեն պատասխանէր : եթէ այս տեղեկագիրը մեր ուզածը չէ, ինչո՞ւ խօսինք անոր վրայ : մեր ուզածն ո՞րն է նէ այն դայ-որ խօսինք :

Տ. ՂԵՒՈՆԻ ՎՐԻ . ՓԻՊԱԼԷՄԵԱՆ . — Ես իբրեւ եկեղեցական կը բողոքեմ Համագումար ժողովոյ այն վճռոյն դէմ, որով կէս ժամու մէջ 2 աթոռային կնճառտ խնդիր կը դատէ եւ մէկ ասեանով 3 կաթողիկոսի ընարութիւններ կորոշէ, եւ կը խնդրեմ որ այս բողոքս արձանագրուի : Իսկ գալով Աղաբէկեան է՞ք . ի այն խօսքին, որով Համագումար ժողովին կախարիչ իբրեւ անձարակ այս խնդրոյն մէջ չմանել եւ վճիռ չտալ, կը պատասխանեմ թէ Համագումար ժողովոյ անդամները Հոռովմայ

պատկին պէս անսխալ չեն դաւանիր ինքզինքնին : կարելի է սխալած ըլլան իրենց որոշմանը մէջ, եւ եթէ սխալած ըլլաւին տեսնեն՝ յետս կը կոչեն, կը լիննայ :

Տ. ԽՈՐԷՆ ԵՊՈ . — Մեր առաջարկութեան դէմ երկու առարկութիւններ մէջ բերուեցան : նախ ըսուեցաւ թէ Համագումար ժողովը կըրնար իւր վճիռը ջնջել հապճեպ եղած է ըսելով, ես ասոր հակառակը կը պնդեմ : թէ եւ նոյն օրը ներկայ չեմ գտնուած Համագումար ժողովոյ նախին եւ մասնակից չեմ եղած իւր վճռոյն, բայց վճիռը կեցած է, տեսնենք թէ արդեօք շտապման արդի՞ւնք է այն : Ննչ կըսէ այդ վճիռը : կըսէ թէ Խաչատուր եպիսկոպոս կաթողիկոս չկրնար ճանչցուիլ քանի որ ի կենդանութեան իւր նախորդին օժումն ընդուներ է : Այս վճիռը թէ՛ 2 ժամու մէջ եւ թէ՛ 2 տարւոյ մէջ ըրած ըլլայ, մի եւ նոյնն է արդարութեան առջեւ : որովհետեւ Համագումար ժողովը չէր կրնար սուտ կանոն մը հրարել, այլ յեկեղեցական կանոնաց բերած պիտի ըլլայ զայդ վճիռ : եթէ կամամտաւարբ ըրած է, այն ասեան պէտք է ամբաստանութեան ենթարկուի նոյն իսկ ժողովը : Ապա ուրիմն կարելի չէ ամբաստանեալ ժողովոյ մը ասեանը վերագործնել զբողոքարկուն :

Երկրորդ ըսուեցաւ թէ ամբաստանելոյն ներկայութեան պէտք էր վճիռ տալ : Բայց ե՞րբ, — երբ որ կարեւորութիւն ըլլար : այդ կարեւորութիւնը բնաւ չկար, որովհետեւ վճիռը կըսէ : « ի կենդանութեան նախորդին օժումն ընդուներ է » : Աճիւն իրողութեան մը վրայ յեցած է, որոյ ստուգութիւնը բնաւ տարակոյս չը վերցներ : ուստի եւ Համագումար ժողովը կարող էր ըստ կանոնաց եկեղեցւոյ պատմական դէպք մը իւր վճռոյն ենթարկել առանց ամբաստանելոյն ներկայութեանը պէտք զգալու :

Հուսկ յետոյ գալով Իւթիւճեան է՞ք . ի այն խօսքին, որով կապիտալիզմ կը ցուցնէ Մայր Աթոռոյ ընդունիլ եւ ճանչելը վԱղթամարայ աթոռն, եթէ մեր առաջարկութեան համեմատ այս խնդիրը բարձրանայ մինչև յատեան Մայր Աթոռոյ, անոր պատասխանն որչափ ալ կընձաւրից երեւի ումանց, բայց ըստ իս այնպէս չէ : Յիրաւի հին պատմութիւնը կաւանդեն

Թէ Գրիգոր Գ. Կաթուղիկոսին օրով զուժարուած Ազգային ժողովը ընդ նորովի ք փակեր է զնորածին Աթոռն Ազգամարայ, բայց հետագայ դարերուն մէջ սիրոյ եւ խաղաղութեան ոգին յաղթանակեր, եւ Տաթևացի Ս. Գրիգոր մեծ վարդապետը կըսէ թէ Ազգամարայ դէմ եղած բանադրանքը լուծեցինք եւ Ս. Էջմիածնայ աթոռոյն ենթարկեցինք զայն: Բանաւոր պարագաներն այնպէս բերին որ հարկ եղաւ ոչ միայն զՍիս, այլ եւ զԱզգամար պահել իւր նախնի դիրքին մէջ իրրեւ արձան յիշատակաց Վասպուրական թագաւորութեան: Ազգամար ազգին առջեւ ուրիշ արդիւնք մ'ալ ունեցաւ, որ առաւել զինքը ներողամտութեան արժանի հանդիսացուց Մայր Աթոռոյ առջեւ: Երբ Սիս ըմբոստացաւ եւ ինքնազլխութեան թեկն ածեց, Ազգամար ընդունեցաւ ազգային որոշումը եւ զՍ. Էջմիածին ազգին զհնազոյն աթոռը ճանչեց. նոյն ատենի Կաթուղիկոսն Զաքարիայ ոչ միայն խոնարհեցաւ ազգին հրամանաց առջեւ, այլ եւ ինքն էր զլիաւոր օծիչ Կիրակոս Վիրապեցի Հայրապետին, որոյ մասնունէն յետոյ ինքն իսկ բարձրացաւ յԱթոռն հայրապետական եւ միացուց զԱզգամար ընդ միով Կաթուղիկոսական գաւազանաւ: Գծիւեմ ժամանակը թէեւ զարձեալ յարատեւել տուաւ բաժանման, բայց Ազգամար միշտ ինքզինքը խոնարհ դրից մէջ պահելով Մայր Աթոռոյ եւ ազգին գլխին եւ ներողամտութեան արժանի բրած է, մանաւանդ որ ինք թուժը մ'եղած է Հոովմէական հոսանաց առջեւ, մինչդեռ զըմբազդարար Սիս սոյն պարձանօք չէ կրցած փայլիլ եւ ազգին համակրութիւնը դրաւել: Սոյն զիտողութիւններն են որ զիս կը վստահեցընեն թէ երբ ըստ իմա առաջարկութեան այս դատը բարձրանայ մինչեւ 'ի Մայր Աթոռ, մեր Վեհափառ հայրապետը խորախորհուրդ տեսութեամբ կշռելով զժամանակս, հաշտ աչօք հայի, եւ արդարութեան վճիռը բարեհաճի իւր ատենէն չնորհել:

Ժախնակիս ոգին, կամ մանաւանդ Աւետարանական սուրբ ոգին, որ բորբոքած է ամենուս սրտին մէջ, այն միութեան սէրը կըսեմ, որով վստաւած էին նախկին Կաթուղիկոսական Յանձնաժողովոյ անդամոց սրտերը, միթէ չպիտի արձարձի նաեւ ձմեր սրտերուն

մէջ, որ առաջնորդէ մեզ 'ի պայծառութեան Ս. Եկեղեցւոյ եւ 'ի միութիւն նորա ընդ գերազան Հայրապետական Աթոռով մեծին Գրիգորի: Միով բանիւ այս միջոցը շատ պիտի զիւրացնէ ինչորոյն դժուարութիւնները, իսկ միւս կերպիւ առաւել քան զառաւել կը դըժուարանայ, Ներեցէք որ այժմէն ըսեմ, Տեա'րք եթէ Համագումար ժողովոյ վերաքննութեան յանձնուի ինչորոյն, այն ժողովին մէջ ես մասն չունիմ. վասն զի չեմ կրնար արդարութիւնը տեսնել եւ անոր հակառակ ընթացից մասնակից հանդիսանալ:

ՊՅԱՃԱՆՆ Յ. ԷՖ. — Համագումար ժողովոյ վճիռը պարզ է. Խաչատուր Եպիսկոպոսին յանձանքն իւր նախորդին կենդանութեան օծուիլն է կըսէ: Իսկ Խաչատուր Եպիսկոպոսալ իւր խնդրագրին մէջ կըսէ. եթէ ասոնք են յանցանքս ներողութիւն կը խնդրեմ:

ՏԱՏԵԱՆ Ա. ԷՖ. — Համագումար ժողովոյ վճիռն, ինչպէս Պոյաճեան էֆ. կըսէ, ճանչցած է Խաչատուր Եպիսկոպոս եւ ներում խնդրած. ուրեմն ի՞նչ հարկ կայ նորէն Համագումար ժողովին զրկելու:

Օրը տարածամած ըլլալով, Ազգամարայ խնդրոյն վիճարանութեան շարունակութիւնը յաջորդ նստին թողուեցաւ, եւ տեսանը գոցուեցաւ 13 օրէն զարձեալ զընդմիակ զուժարելու որոշմամբ:

Բ. Եպիսկոպոսէր Ե. Ս. ՕՏԵԱՆ
 Գ. ՊԱՌՆԱՍԵԱՆ Գ. Ս. ՕՏԵԱՆ



ՆԻՍՑ ԺԹ.

16 ՄԱՐՑ 1873

ՆԱԽԱԳԱՀ. — ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԿ.
 ԱՏԵՆԱՊԵՏ. — ՕՏԵԱՆ Գ. ԷՖԷՆՏԻ (Ա. Ատենապետ)

ԿԱՐԳ ԽՆԴԻՐՈՅ

1. Վաւերացում նախորդ ԾԸ. նիստի ատենագրութեան:
2. Վաւերացում ընտրութեան Սահմ. վերաքննիչ Յանձնաժողովոյ:
3. Տեղեկագիր Ազգամարայ Կաթուղիկոսական խնդրոյ:
4. Ատենական կանոնադրութիւն:

Ժամը 8 ին Ատենան բացուեցաւ 'ի ներկայութեան 44 երեսփոխանաց, որոց թիւն 'ի վերջոյ թէեւ 49 ի յանդեցաւ, սակայն մեծագոյն մաս գոյանալու համար դեռ եւս 10 թիւ կը պակսէր. հետեւապէս ժողովը մեծամասնութիւն չունեցաւ:


Զիտողութեան զրուեցաւ. եւ թէպէտ զիտողութիւն ընող չեղաւ, սակայն վաւերացման համար ժողովոյ օրինական թուոյն լրացման սպասել հարկ էր, որ մինչեւ ժամը 9 չզոյացաւ:

Հետեւաբար եւ ժողովը ցրուեցաւ ութն օրէն զարձեալ զուժարելու պայմանաւ:

Ատենապետ էֆ. ծանոյց թէ նախորդ դռնփակ նստի ատենագրութիւնը չէ տպուած մինչեւ որ ժողովն որոշէ, եւ առաջարկեց որ կարդացուի 'ի լուր ժողովոյն:

Բ. Եպիսկոպոսէր Ե. Ս. ՕՏԵԱՆ
 Գ. ՊԱՌՆԱՍԵԱՆ Գ. Ս. ՕՏԵԱՆ

Ժողովականաց հաւանութեանը համեմատ, նախորդ ԾԸ. նստի Ատենագրութիւնը կարդացուեցաւ, որ 3 քառորդի չափ տեւեց. եւ յետ ընթերցման Ատենապետ էֆ. ի կողմէն



1870

1870

1870

1870

1870

1870


1870

1870

1870

1870

1870



1870

1870

1870

ԳԻՆ 2 ՂՈՒՐՈՒՇ

ՄԵՓԱՎԱՆՈՒԹԻՒՆ ԵՋԳԱՅԻՆ ՄՆՏՈՒԿԻՆ

Կը ծախուի ի Գիւանատան Պատրիարքարանի, եւ կը գտնուի
Նկեղեցեաց բանկաները: